

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

Է.Ռ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

Պտղաբուծություն

**ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ (072101.00.6
ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ, _ 072301.00.6 ՏԵՔՍԻԼ
և ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ
ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ, 072101.00.6
ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ)**

**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ
ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

ԵՐԵՎԱՆ

ՀԱԱՀ

2021

Ներածություն

Մեթոդական ցուցումները կազմված են ըստ «Հումքի ստացման տեխնոլոգիա» առարկայի՝ «Կաթի, կաթնամթերքի, մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա», «Հացի հրուշակեղենի և մակարոնի արտադրության տեխնոլոգիա», «Ձկան և ձկնամթերքի տեխնոլոգիա», «Մսի և մսամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության, «Գյուղատնտեսության և պարենային ապրանքների վաթեթավորման տեխնոլոգիա» «Դիզայն, Կաշի ու մորթու տեխնոլոգիա» և «Խմորման արտադրության տեխնոլոգիա» «Գինեգործություն», «Պահածոյացման և սննդախտանյութերի տեխնոլոգիա», «Գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում» մասնագիտության ուսանողների համար նախատեսված ծրագրի: Համաձայն որի ուսանողների մոտ անհրաժեշտ է ձևավորել գիտելիքներ «Հումքի ստացման տեխնոլոգիա» առարկայի տեսական և լաբորատոր թեմաների վերաբերյալ, մասնավորապես պտղատու բույսերի կենսաբանության, կառուցվածքի, աճման ու պտղաբերման օրգանների, պղատու տեսակների ու սորտերի դասակարգման, դրանց սորտային բազմազանության և տարածվածության մասով: Պտղաբուծության ոլորտի զարգացման գործում կարևոր նշանակություն ունի պտղատեսակների և սորտերի ճիշտ մասնագիտացումն ու տեղաբախշումն ըստ հողակլիմայական գոտիների, որի համար խիստ կարևորվում է ինչպես տեղական,

այնպես էլ ներկրված սորտերի ուսումնասիրությունն ու հետազոտումը:

Միաժամանակ ուսանողները ձեռք կբերեն կայուն գիտելիքներ պտղատեսակների ու սորտերի ճանաչման հարցում, որը չափազանց կարևոր է դրանց ընտրության և պահածոյացման, ինչպես նաև սննդանյութերի տեխնոլոգիաներում: Մեթոդական ցուցումները ուսումնասիրելու ընթացքում ուսանողները պատկերացում կկազմեն գյուղատնտեսության ոլորտում պտղաբուծության կարևոր նշանակության մասին, մարդու սննդառության և տնտեսական գործունեության համար պտուղների կարևորության մասին, ինչպես նաև լավատեղյակ կլինեն պտուղներում պարունակվող ածխաջրերի, վիտամինների, օրգանական թթուների, հանքային աղերի, պեկտինային նյութերին , որոնք սննդաբար և առողջաբար մեծ նշանակություն ունեն մարդու օրգանիզմի համար: Ներկայացված մեթոդականում զետեղված են պտղատուների Հայաստանում ինչպես հնուց ի վեր մշակվող սորտերի, այնպես էլ վերջին տարիներին հանրապետություն ներկրված սորտերի բնութագրեր:

Մեթոդականում ներկայացված ծրագրային նյութերը կնպաստեն պտղաբուծություն դասընթացի լավ յուրացմանն ուսանողների կողմից:

Լաբորատոր պարապմունք 1. Պտղահատապտղ և բույսերի օրգանոգրությունը և տերմինաբանությունը:

1.Դասընթացինպատակը: Ուսումնասիրել պտղատու բույսերի օրգանոգրաֆիան և տերմինաբանությունը:

2.Ներածական բացատրություն: Ինչպես բոլոր կենդանի օրգանիզմները այնպես էլ պտղահատապտղային բույսերը

իրենց հատկություններով ու հատկանիշներով մի կողմից արդյունք են իրենց ժառանգական հիմքի, մյուս կողմից էլ այդ հիմքի վրա անընդհատ ազդող արտաքին միջավայրի փոփոխվող պայմանների: Այդ երկու գործոնների ազդեցության շնորհիվ դարերի ընթացքում գոյացել և ստեղծվել է պտղահատապտղային բույսերի այն հարուստ բազմազանությունը, որ գոյություն ունի երկրագնդի վրա: Պտղահատապտղային բույսերն իրենց ծավալի, խոշորության, երկարակեցության և այլ առանձնահատկությունների շնորհիվ դասակարգվում են հետևյալ կերպ՝ հզոր աճ ունեցող ծառեր, միջակ աճ ունեցող ծառեր, ծառանմաններ, թփեր, կիսաթփեր, խոտանմաններ:

Պտղահատապտղային բույսերի հիմնական օրգաններն են արմատները, ցողունները, տերևները, ծաղիկները: Պտղահատապտղային բույսերը կազմված են հիմնականում 3 մասից՝ ցողունից (բուն, կենտրոնական ուղեկցող, կենտրոնական ուղեկցողի շարունակող շիվ, կմախքային ճյուղեր, որոնք կազմում են սաղարթի հիմքը կամ կմախքը, կիսակմախքային ճյուղեր, աճակալող ճյուղեր), արմատավզիկից, որն իր հերթին լինում է իսկական և պայմանական, արմատային համակարգից, որն առաջանում և իր աճն ու զարգացումը իրականացնում է հողում:

3.Աշխատանքի ընթացքը: Ուսանողը պետք է ծանոթանա և ճանաչի ինչպես նաև ներկայացնի դասախոսի կողմից իրեն նախորոք ներկայացրած ու բացատրած պտղահատապտղային բույսերի կենսական ձևերի՝ ծառերի, ծառանմանների, թփերի, կիսաթփերի, խոտաբույսերի կառուցվածքային առանձնահատկությունները:

Նկարագրի պտղահատապտղային բույսերի կառուցվածքը, տարբեր տեսակների վերգետնյա և արմատային համակարգերը ու դրանց օրգանները՝ առանձին արմատներ, արնատավզիկ, բուն,

կենտրոնական ուղեկցող, կենտրոնական ուղեկցողի շարունակող շիվ, կմաղքային ու կիսակմաղքային ճյուղեր: Ուսանողին կտրվի որևէ պտղատեսակի անվանում, ըստ որի նա պետք է լրացնի աղյուսակը գրառելով պտղատեսակի անվանումը այն սյունակում, որը համապատասխանում է բույսի կենսական ձևին (աղյուսակ 1):

Պտղահատապտղային բույսերի կենսական ձևերը

Հզոր աճ ունեցող ծառեր	Միջակ աճ ունեցող ծառեր	Ծառանմաններ	Թփեր, կիսաթփեր	Խոտանմաններ

Լաբորատոր պարապմունք 2. Պտղատուների աճման և պտղաբերման օրգանները:

Սաղարթի, պտղի և սերմի ձևերը:

1.Դասընթացի նպատակը: Ուսումնասիրել ու ճանաչել պտղատու բույսերի աճման և պտղաբերման օրգանները, ծաղկի կառուցվածքը, սաղարթի, պտղի և սերմի ձևերը:

2.Ներածական բացատրություն: Հնդավոր և կորիզավոր պտղատեսակները ունեն միևնույն աճման օրգանները, տարբերվում են իրենց պտղաբերման օրգաններով:Կմաղքային և կիսակմաղքային ճյուղերի վրա առաջանում են բազմաթիվ աճող և պտղաբերող գոյացություններ, որոնք իրարից տարբերվում են և կրում են տարբեր անուններ:Աճման օրգաններն են շիվը կամ ընձյուղը, վաղաժամ շիվը և հոռաշիվը: Հնդավորների պտղաբերման օրգաններն են՝ պտղատու շիվը,

նիգակը, օղանիստը, պտղակիրը կամ բարդ օղանիստը, պտղապայուսակը: Կորիզավորների պտղաբերման օրգաններն են՝ պտղաբերող կամ ծաղկակիր ճյուղը, փնջաճյուղը, խթանաճյուղը և խառը պտղաբերող ճյուղը: Ինչպես վեգետատիվ այնպես էլ պտղաբերող օրգաններն առաջանում են բողբոջների հաշվին: Տարբերվում են հիմնականում երկու տիպի բողբոջներ՝ վեգետատիվ (աճող) և ռեպրոդուկտիվ կամ գեներատիվ (պտղաբերող): Սրանք տարբերվում են իրենց կազմությամբ, մեծությամբ, ճյուղերի վրա իրենց դասավորությամբ:

3. Աշխատանքի ընթացքը: Դիտակտիկ նյութերի՝ հերբարիումների, նկարների օգնությամբ դասախոսը պետք է բացատրի և ցույց տա տարբեր կենսաբանական արտադրական խմբերի պատկանող պտղահատապտղային բույսերի աճակալող օրգանները, դրանց վրա դասավորված բողբոջների բնույթը, ըստ որի կարելի է կանխատեսել նաև գալիք տարվա բերքը: Ուսանողը պետք է կարողանա բնութագրել նճանաչել, ինչպես նաև տարբերել աճակալող ճյուղերը՝ նորմալ ու վաղաժամ շիվը, հոռաշիվը, պտղաշիվը, օղանիստը, նիգակը, պտղակիրը, պտղապայուսակը, խառը պտղաբերող ճյուղը, փնջաճյուղը, խթանաճյուղը: Ներկայացնի բողբոջի, տերևի, ծաղկի, պտղի ու սերմի կառուցվածքը: Ուսանողին կտրվի որևէ պտղատու կամ հատապտղային բույսի անվանում, որին համապատասխան նա պետք է լրացնի պայուսակը նշելով պտղի ձևը, ծաղկի փռոցի ձևը, սերմի ձևը, պտղաբերման օրգանը: Այդպիսով լրացնելուց հետո տալ պտղատուի անվանումը:

Պտղահատապտղային բույսերի պտղի, սերմի ձևերը

պտղաբերման օրգանները

Պտղատեսակի անվանումը	Ծաղկի փռչուման ձևը	Մերմի ձևը	Պտղաբերման օրգանը	Պտղի ձևը

Լաբորատոր պարապմունք 3.ՀՀ-ում հնդավորների շրջանացված առավել հայտնի սորտերի բնութագիրը, դրանց օգտագործման բնույթը:

1.Դասընթացինպատակը:Սովորել ու ճանաչել ՀՀ-ում շրջանացված հնդավորների խմբի ներկայացուցիչների առավել հայտնի սորտերի պտղի բնութագիրը և դրանց օգտագործման բնույթը:

2.Ներածական բացատրություն:Հնդավորների խմբի մեջ մտնող բոլոր պտղատու բույսերը պատկանում են վարդագգիների ընտանիքին, խնձորայինների ենթաընտանիքին, որոնք նաև տարբեր ցեղի ներկայացուցիչներ են: Խմբի ներկայացուցիչներն են արտադրական նշանակություն ունեցող խնձորենին, տանձենին, սերկևիլենին, ինչպես նաև Հայաստանի անտառներում տարածված՝ արոսենին, ալոճենին, զկեռենին: Այդ ենթաընտանիքի մեջ մտնող տարբեր ցեղերի ներկայացուցիչներ իրար հետ պատվաստելիս ֆիզիոլոգիապես համատեղելի են: Հնդավորների պտուղը կեղծ է և կոչվում է հունդ:

Հնդավորների պտուղները պահունակ և փոխադրունակ են: Հնդավոր մշակաբույսերի ինչպես վայրի, այնպես էլ մշակովի ձևերը տարածված են գրեթե ողջ Հայաստանով: Ընդ որում վայրի տեսակներն աճում են անտառային բուսականության հետ միասին, մշակովի սորտերը աճեցնում է մարդը արտադրական այգիներ հիմնելու նպատակով: Շնորհիվ իրենց բարձր ցրտադիմացկունության, սորտային հարուստ կազմի և տարբեր հասունացման ժամկետներ ունենալու հնարավորություններից՝ հնդավորներից խնձորենու և տանձենու մշակությունը կարելի է իրականացնել Հայաստանի գրեթե բոլոր տարածաշրջաններում : Սերկևիլենին ի տարբերություն տանձենու և խնձորենու առավել ջերմասեր է ու ավելի պահանջկոտ է արտաքին միջավայրի ազդող գործոնների նկատմամբ ուստի և գրավում է տարածման առավել սահմանափակ արեալ: Աղյուսակ 1ա-ում, 1բ-ում և 1գ-ում համապատասխանաբար ներկայացված են ՀՀ ում աճող խնձորենու, տանձենու և սերկևիլենու որոշ սորտերի համառոտ բնութագրերը:

3. Աշխատանքի ընթացքը: Միևնույն տեսակին պատկանող պտղատուների սորտերը տարբերվում են միմյանցից պտղի հետևյալ հատկանիշներով՝ պտուղների մեծությամբ (ըստ որի տարբերվում են շատ խոշոր, խոշոր, միջակ, մանր, շատ մանր պտուղներ), պտղի ձևով (կլոր գնդաձև, տափակ կլոր, օվալաձև, տափակ, ձվաձև) պտուղների գույնով (կանաչ, դեղին վարդագույն, կանաչ դեղնավուն, դեղին, կարմիր), մակերեսի ձևով (հարթ, խորդուբորդ, կնճռտոված, կողավոր), համով (քաղցր, քաղցրաթթվաշ, թթվաշաքաղցր, թթվաշ, թթվաշ թույլ տտիպ): Ուսանողին կտրվի որևէ պտղատեսակ, ստորև բերված աղյուսակում նա պետք է լրացնի տվյալ պտղատեսակի հատկանիշները: Ուսանողը պետք է ճանաչի և ըստ պտղի հատկանիշների իրեն հանձնարարված հնդավորների խմբին պատկանող պտուղների սորտի անվանումը:

Հնդավորների սորտերի որոշումը պտղի հատկանիշներով

Աղյուսակ 1

Պտղատեսակը	Պտղի մեծությունը (գ)	Պտղի ձևը	Պտղամաշկիորակըն գույնը	Պտղամսի որակը

Լաբորատոր պարապմունք 4.ՀՀ-ում շրջանացված կորիզավորների առավել հայտնի սորտերի բնութագիրը, դրանց օգտագործման բնույթը:

1.Դասընթացի նպատակը: Սովորել ու ճանաչել ՀՀ-ում շրջանացված կորիզավորների խմբի ներկայացուցիչների առավել հայտնի սորտերի պտղի բնութագիրը և դրանց օգտագործման բնույթը:

2.Ներածական բացատրություն: Կորիզավորների խմբի մեջ մտնող բոլոր պտղատու բույսերը պատկանում են վարդագգիների ընտանիքին,սալորայինների ենթաընտանիքին, որոնք նաև տարբեր ցեղի ներկայացուցիչներ են: Խմբի ներկայացուցիչներն են ծիրանենին, դեղձենին, սալորենին, բալենին, կեռասենին, շլորենին:Սրանք հնդավորների համեմատ ավելի ջերմասեր են:Կորիզավորների պտուղը իսկական է և կոչվում է հյութալի կորիզապտուղ: Պտղաբերում են մեկ տարեկան ճյուղերի, փնջաճյուղերի և խառը պտղաբերող ճյուղերի վրա: Խմբի ներկայացուցիչներից ծիրանենին առաջնակարգ տեղ է զբաղեցնում Հայաստանի արտադրատնտեսական արդյունաբերության մեջ:Հայտնի է ծիրանենու 3 տեսակներ՝ սովորական,մանջուրական և

սիբիրական, որոնցից մշակովի սորտերի ստացմանը մասնակցել է սովորական վայրի ծիրանենին: Մանջուրական տեսակից ստացել են ցածրորոկ շատ սորտեր: Հայաստանում ծիրանենու մշկությունը հնուց ի վեր կենտրանացած է եղել Արարատյան հարթավայրում, որտեղ այն ունի արդյունաբերական մեծ մշանակություն, մշակվում է նաև Վայոց ձորի, Մեղրու, Նոյեմբերյանի, Աբովյանի, Աշտարակի և այլ տարածաշրջաններում: Դեղձենու պտուղները ամենախոշորն են կորիզավորների խմբի ներկայացուցիչներից: Դեղձենու ցեղի մեջ մտնում է մեկ տեսակ, որից առաջացել է դեղձենու գրեթե բոլոր սորտերը: Ի տարբերություն դեղձենու, սալորենիների ցեղի մեջ մտնող տեսակները շատ են, սակայն մշակովի սորտերի ստացմանը մասնակցել են մի քանիսը, հատկապես՝ մամխասալորենին, որը աճում է Հայաստանի գրեթե բոլոր անտառներում: Կեռասենու ցեղի մեջ մտնում է մեկ տեսակ, որը կոչվում է սովորական կեռեսենի: Մշակովի բոլոր սորտերը առաջացել են այս տեսակից: Բալենին կորիզավորների խմբում ամենացրտադիմացկունն է: Սրա ցեղի մեջ մտնում է 150 տեսակ, սակայն մշակովի սորտերի ստացմանը մասնակցել են նի քանիսը: Աղյուսակ 2ա-ում, 2բ-ում, 2գ-ում, 2դ-ում և 2ե-ում համապատասխանաբար ներկայացված են ՀՀ-ում աճող ծիրանենու, դեղձենու, սալորենու, բալենու և կեռասենու որոշ սորտերի համառոտ բնութագրերը:

3. Աշխատանքի ընթացքը: Միևնույն տեսակին պատկանող պտղատուների սորտերը տարբերվում են միմյանցից պտղի հետևյալ հատկանիշներով՝ պտուղների մեծությամբ (ըստ որի տարբերվում են շատ խոշոր, խոշոր, միջակ, մանր, շատ մանր պտուղներ), պտղի ձևով (գնդաձև, էլիպսաձև, օվալաձև, տափակ, ձվաձև) պտուղների գույնով (կանաչ, դեղին վարդագույն, կանաչ դեղնավուն, նարնջագույն, կարմիր, սպիտակակարմրավուն), մակերեսի ձևով (հարթ, խորդուբորդ, կնճռոտված, կողավոր, սև

կապտավուն, մանուշակագույն), համով (շատ քաղցր առանց թթվության, քաղցրաթթվաշ, թթվաշաքաղցր, քաղցր ուժեղ բուրավետ, թթվաշ թույլ տտիպ): Ուսանողին կտրվի որևէ պտղատեսակ, ստորև բերված աղյուսակում նա պետք է լրացնի տվյալ պտղատեսակի հատկանիշները:

Ուսանողը պետք է ճանաչի և ըստ պտղի հատկանիշների կանխորոշի իրեն հանձնարարված կորիզավորների խմբին պատկանող ծիրաենու, դեղձենու, սալորենու, բալենու կամ կեռասենու պտուղների սորտի անվանումը:

Կորիզավորների սորտերի որոշումը պտղի հատկանիշներով

Պտղատեսակը	Պտղի մեծությունը (գ)	Պտղի ձևը	Պտղամաշկի Ռրակը և գույնը	Պտղամսի որակը	Պտղամսի համը

Լաբորատոր պարապմունք 5. ՀՀ-ում շրջանացված ընկուզենու առավել հայտնի ձևերը ու նշենու որոշ սորտերի բնութագիրը, դրանց օգտագործման բնույթը:

1.Դասընթացի նպատակը: Սովորել ու ճանաչել ՀՀ-ում շրջանացված ընկուզենու և նշենու առավել հայտնի ձևերի ու սորտերի բնութագիր և դրանց օգտագործման բնույթը:

2.Ներածական բացատրություն: Միննույն տեսակին պատկանող պտղատունների սորտերը տարբերվում են միմյանցից պտղի հետևյալ հատկանիշներով՝ պտուղների մեծությամբ (ըստ որի տարբերվում են շատ խոշոր, խոշոր, միջակ, մանր, շատ մանր պտուղներ), պտղի ձևով (կլոր գնդաձև, տափակ կլոր ,օվալաձև,տափակ, ձվաձև) պտուղների գույնով (կանաչ,կանաչ դեղնավուն, կանաչ մոխրագույն,), մակերեսի ձևով (հարթ, խորդուբորդ, կնճռոտված, կողավոր), համով :Հայաստանը հարուստ է ընկուզենու արժեքավոր ձևերով: Հայաստանի շրջաններում գրեթե յուրաքանչյուր ծառ իրենից ներկայացնում է առանձին ձև: Ավաղ ծառատեսակի բազմաձևությունն այնքան մեծ է, որ դժվար է գտնել մի քանի ծառի, որոնք ունենան բոլորովին միանման հատկանիշներ: Ընկուզենու ձևերի բազմապիսությունը ոչ միայն ըստ սաղարթի, տերևների է, այլ և ըստ բիոլոգիական

Պտուղների մեծությունը	Պտուղների ձևը	Պտուղների գույնը	Համը	Սորտի անավանումը

առանձնահատկությունների՝ ծաղկման բնույթի, աճեցման, ցրտադիմացկունության, չորադիմացկունության, հիվանդությունների և վնասատուների դեմ ունեցած իմունիտետի:Հայաստանում գոյություն ունեցող ընկուզենու հարյուրավոր զանազան ձևերը միմյանցից տարբերվում են

հետևյալ առանձնահատկություններով՝ ընկույզի մեծությամբ, ձևով, կճեպի բնույթով ու հաստությամբ, միջուկի պարունակությամբ և քիմիական կազմով: Աղյուսակ 3-ում, 4-ում միամապատասխանաբար ներկայացված են ՀՀ ում աճող ընկուզենու և նշենու առավել հայտնի ձևերի ու սորտերի համառոտ բնութագիր և դրանց օգտագործման բնույթը:

3. Աշխատանքի ընթացքը: Ուսանողը պետք է ճանաչի և ըստ պտղի հատկանիշների որոշի իրեն հանձնարարված ընկուզենու բուսաբանական ձևի կամ նշենու սորտի անվանումը:

Ընկուզենու ձևերի որոշումը պտղի հատկանիշներով

Աղյուսակ 3

Ընկույզի ձևը	Կճեպի ձևը	Միջուկի ձևը	Միջնապատի ձևով	Քիմիական կազմ

Նշենու սորտերի որոշումը պտղի հատկանիշներով

Աղյուսակ 4

Լաբորատոր պարապմունք 6. ՀՀ-ում հատապտղայինների շրջանացված առավել հայտնի սորտերի բնութագիրը, դրանց օգտագործման բնույթը:

1.Դասընթացի նպատակը: Սովորել ու ճանաչել ՀՀ-ում շրջանացված հատապտղայինների առավել հայտնի սորտերի բնութագիր և դրանց օգտագործման բնույթը:

2.Ներածական բացատրություն:Հատապտղայինների խմբի ներկայացուցիչներն են՝ ելակենին, գետնայելակը, մորենին, մաշենին, հաղարջենին , կոկոռչենին, հապալասը: Հատապտղայինների խմբի ներկայացուցիչները բնության մեջ հանդես են գալիս թփերի ու խոտաբույսերի տեսքով: Մրանք տարբեր բուսաբանական ընտանիքների ներկայացուցիչներ են: Հատապտղայինների մշակությունը կարելի է իրականացնել Հայաստանի գրեթե բոլոր տարածաշրջաններում:Մրանք հիմնականում խոնավասեր են: Փոխադրունակությամբ և պահունակությամբ այքի չեն ընկնում: Շուտ են անցնում բերքատվության և տալիս են առատ բերք: Կարճ արմատային համակարգ ունենալու շնորհիվ հատապտղայինների մշակությունը կարելի է իրականացնել ինչպես առանձին

Պտղատեսակը	Պտղի մեծությունը (գ)	Պտղի ձևը	Պտղամաշկի որակը և գույնը	Պտղամսի որակը	Պտղամսի համը և բույրը

հողատարածություններում, այնպես էլ երիտասարդ այգիների նիջջարային տարածություններում: Աղյուսակ5ա-ում, 5բ-ում, 5գ-ումհամապատասխանաբար ներկայացված են ՀՀ-ում

աճող ելակենու, հաղարջենու և կոկոռշենու, մորենու և մոշենու որոշ սորտերի համառոտ բնութագրերը:

3. Աշխատանքի ընթացքը: Միևնույն տեսակին պատկանող հատապտուղների սորտերը տարբերվում են միմյանցից պտղի հետևյալ հատկանիշներով՝ պտուղների մեծությամբ (ըստ որի տարբերվում են շատ խոշոր, խոշոր, միջակ, մանր, շատ մանր պտուղներ), պտղի ձևով (կլոր գնդաձև, տափակ կլոր, օվալաձև, սրտանման, ձվաձև) պտուղների գույնով (կանաչ, դեղին վարդագույն, կանաչ դեղնավուն, դեղին, կարմիր, սպիտակավարդագույն, սև), մակերեսի ձևով (հարթ, խորդուբորդ, կնճռոտված, կողավոր), համով (քաղցր, քաղցրաթթվաշ, թթվաշաքաղցր, թթվաշ, թթվաշ թույլ տոտիպ): Ուսանողը պետք է ճանաչի և ըստ պտղի հատկանիշների կանխորոշի իրեն հանձնարարված հատապտղայինների խմբին պատկանող ելակենու, մորենու կամ մոշենու, հաղարջենու կամ կոկոռշենու պտուղների սորտի անվանումը:

Հատապտղայինների սորտերի որոշումը պտղի հատկանիշներով

Աղյուսակ 5

Լաբորատոր պարապմունք 7. ՀՀ-ում չոր մերձարևադարձայինների շրջանացված առավել հայտնի սորտերի բնութագիրը, դրանց օգտագործման բնույթը:

1. Դասընթացի նպատակը: Մովորել ու ճանաչել ՀՀ-ում շրջանացված չոր մերձարևադարձայինների առավել հայտնի սորտերի բնութագիր և դրանց օգտագործման բնույթը:

2. Ներածական

բացատրություն: Չոր

մերձարևադարձայինների խմբի ներկայացուցիչներն են թզենին, նոնենին, ժորենին կամ արևելյան խուրման, ձիթենին: Մրանք

տարբեր բուսաբանական ընտանիքների ներկայացուցիչներ են, որոնք բնության մեջ հանդես են գալիս ծառերի ու թփերի տեսքով: Միրում են շոգ ամառ, տաք և երկարատև աշուն, մեղմ ձմեռ: Աղյուսակ 6ա-ում, 6բ-ում, 6գ-ում և 6դ-ում համապատասխանաբար ներկայացված են ՀՀ-ում աճող թզենու, նոնենու և արևելյան խուրմայի կամ ժորենու և ձիթենու որոշ սորտերի համառոտ բնութագրերը:

3.Աշխատանքի ընթացքը:Միևնույն տեսակին պատկանող պտղատուների սորտերը տարբերվում են միմյանցից պտղի հետևյալ հատկանիշներով՝ պտուղների մեծությամբ (ըստ որի տարբերվում են շատ խոշոր, խոշոր, միջակ, մանր, շատ մանր պտուղներ), պտղի ձևով (կլոր, տափակ կլոր, երկարավուն, տանձաձև, լայն օվալաձև) պտուղների գույնով (կանաչ, հավասարաճափ կանաչ, դեղնականաչ, կապտագույն, մուգ ալ կարմիր, բաց կարմիր, բալագույն, նարնջակարմիր, մուգ նարնջագույն, նարնջագույն), մակերեսի ձևով (հարթ, խորդուբորդ, կնճռոտված,) ,համով (քաղցր, քաղցրաթթվաշ, թթվաշաքաղցր, թթվաշ, թթվաշ թույլ տտիպ,քաղցր հյութալի, տտիպ, թույլ տտիպությամբ):

Ուսանողը պետք է ճանաչի և ըստ պտղի հատկանիշների կանխորոշի իրեն հանձնարարված չոր մերձարևադարձայինների խմբին պատկանող թզենու, նոնենու, ժորենու,ձիթենու պտուղների սորտի անվանումը:

Չոր մերձարևադարձայինների սորտերի որոշումը պտղի հատկանիշներով

Աղյուսակ6

Պտղատեսակը	Պտղի մեծությունը(գ)	Պտղի ձևը	Պտղամաշվի Որակը և գույնը	Պտղամսի որակը

--	--	--	--	--



Սորտի անվանումը, ծագումը	Հասունացման ժամկետը և ցրտադիմացկունությունը	Բերքատվությունը Պտուղների պահունակությունը և փոխադրունակությունը	Աճման, պտղաբերման բնույթը	Պտղի մեծությունը, գույնը, համը
<p><u>Այդոռեդ</u></p> <p>Հյուսիս-ամերիկյան սորտ է: Ստացվել է 1935թ-ին ԱՄՆ-ի Այդախոկայանում Վագներ և Ջոնաթան սորտերի տրամախաչումից</p>	<p>Ձմեռային սորտ է: Ցրտադիմացկունությունը բարձր չէ:</p>	<p>Բերքատու սորտ է: Բերքահավաքը կատարվում է սեպտեմբերին: 1 ծառից տալիս ենմինչև 70 կգ բերք: Պտուղների պահունակությունը բարձր է մինչև մարտ ապրիլ ամիսները:</p>	<p>Միջակ աճեցողությամբ ծառեր են: Բերքի են անցնում այգին հիմնելուց 4-5-րդ տարում: Պտղաբերում են օղանիստերի և նիզակների վրա:</p>	<p>Միջակ մեծության են՝ մինչև 180գ-անոց խոշոր պտուղներ: Պտուղը հարթ կլորավուն է, ողջ պտուղը պատված է մուգ մորեգույն ծածկող գույնով: Մաշկը նուրբ է: Պտղամիսը՝ սպիտակավուն, հյութալի, թթվաքաղցր համով, գերազանց որակի:</p>
<p><u>Բանան ձմեռային</u></p>	<p>Ձմեռային սորտերից է, բավական ցրտադիմացկուն է</p>	<p>Բերքատվությունը՝ մեկ ծառից մինչև 200 կգ Պտղաբերման շրջան է անցնում 6-րդ տարուց: Բերքահավաքը կատարվում է սեպտեմբերի կեսերից մինչև հոկտեմբերի կեսերը: Պտուղները պահվում են մինչև փետրվար-մարտ: Փոխադրունակությունը շատ բարձր չէ:</p>	<p>Պտղաբերում է օղանիստերի և պտղաշիվերի վրա: Խոշոր ծառեր են, ուժեղ աճեցողությամբ: Բերքի են անցնում այգին հիմնելուց 4-5-րդ տարում: Ծառերի պտղաբերման պարբերականությունը թույլ է արտահայտված</p>	<p>Պտուղները խոշոր են, կամ միջակ, 120-300 գ և ավելի քաշով: Կլոր կամ երկրավուն, կոնաձև, երբեմն տափակ, անկանոն ձևի: Մաշկը հաստ է, ամուր, մոմային փայլով, բաց կանաչ, հետագայում բաց դեղին, արևի կողմից գեղեցիկ շառագունած: Ողջ մակերեսով տարածվում են միջակ մեծության, բաց գույնի բազմաթիվ կետեր: Սորտին բնորոշ է պտղի երկարությամբ ձգվող գիծ-ծավաձքը: Պտղամիսը բաց դեղին է, հյութալի, զինեքաղցր, բանանի բուրմունքով:</p>
<p><u>Բելֆլյոր դեղին</u></p>	<p>Ձմեռային սորտերից է, ցրտադիմացկունություն</p>	<p>Բերքատվության են անցնում 7-8-րդ տարուց: Բերքատվությունը</p>	<p>Պտղաբերում են օղանիստերի և պտղաշիվերի վրա:</p>	<p>Պտուղները գեղեցիկ են, միջակից մեծ կամ խոշոր մինչև 300 գ և ավելի կոնաձև:</p>

<p>Հյուսիս Ամերիկյան սորտ է</p>	<p>նը բարձր է</p>	<p>բարձր է՝ 1 ծառիցմինչև 360 կգ, բերքահավաքը կատարվում է սեպտեմբերի երրորդ տասնօրյակից մինչև հոկտեմբերի առաջին տասնօրյակը: Պահպանվում են մինչև փետրվար, մարտ ամիս:</p>		<p>Պտղամաշկը մաուր է, նուրբ, փայլով, բերքը հավաքելիս դեղնականաչ ապա՝ կիտրոնադեղին: Պատված է նոսր տարածված ժանգակետերով: Պտղամիսը բաց դեղին է, ամուր, նուրբ, հասունանալիս փխրուն, հյութալի, թույլ բուրմունքով, քաղցրաթթվաշ, յուրահատուկ համով:</p>
<p><u>Օրեգոն սփուռ</u></p>	<p>Վաղահաս է:</p>		<p>Ծառը մեծ է, տերևախիտ, կարող է աճել անբերրի հողորում, դիմացկուն է հիվանդությունների նկատմամբ:</p>	<p>Պտուղները խոշոր են , շատ գեղեցիկ:</p>
<p><u>Գուլեն Ղեկշես</u> (Ոսկյա հրաշալի) Հայտնաբերվել է 1914թ. ԱՄՆ-ի Վիրջինիա նահանգում</p>	<p>Համարվում է ՀՀ-ում լավագույն ձմեռային սորտերից մեկը: Այս սորտը ունի միջակ դիմացկունություն ցրտի նկատմամբ</p>	<p>Ծառերը բերքի են անցնում 4-5-րդ տարուց: Կլոնային պատվաստակալների դեպքում՝ ավելի վաղ: Պտուղների հասունացումը տեղի է ունենում սեպտեմբերի վերջին կամ հոկտեմբերի սկզբին:</p>	<p>Ծառերը աչքի են ընկնում միջակ աճեցողությամբ: Պտղաբերում է օղանիստերի և պտղաշիվերի վրա:</p>	<p>Պտուղները խոշոր են՝ 150գ. և ավելի կոնաձև, գեղեցիկ ոսկեգույն: Պտղամաշկը անհարթ, փայլը պատված նոսր դասավորված դարչնագույն կետերով: Պտղամիսը սերուցքագույն է, միջին ամրության, հյութալի, հիանալի բուրմունքով և գերազանց համային հատկանիշներով:</p>
<p><u>Գրենսի Սմիթ</u> Ավստրալիական սորտ է</p>	<p>Ձմեռային հասունացման սորտերից է</p>	<p>Վաղ են մտնում պտղաբերության շրջան և աչքի են ընկնում առատ պտղաբերմամբ: Բերքահավաքը կատարվում է սեպտեմբերի վերջին կամ հոկտեմբերի սկզբին: Պտուղները պահվում են մինչև ապրիլ, մայիս և ճժտված են բարձր փոխադրունակությամբ</p>	<p>Ուժեղ աճեցողությամբ օժտված ծառեր են: Պտղաբերում են օղանիստերի և պտղաշիվերի վրա:</p>	<p>Պտուղները միջակ մեծության են կամ խոշոր, կլորավուն կոնաձև: Պտղամաշկը հարթ է, մուգ կանաչ գույնի, պատված է բազմաթիվ սպիտակավուն ենթամաշկային կետերով: Պտղամիսը բաց կանաչ գույնի է կամ սպիտակ, համեղ, պինդ, հյութալի, քաղցրավուն, թարմացնող թթվությամբ և թույլ բուրմունքով:</p>

<p><u>Մելքա</u></p> <p>Կանադական սորտ է: Ստացել են Կանադայի սելեկցիոներներն Օտտավայի փորձակայանում, Մակինտոշ սորտի սերմերի ցանքից</p>	<p>Ամառային հասունացման սորտերից է</p>	<p>Ծառերը վաղ են անցնում պտղաբերության շրջան՝ 3-4-րդ տարուց և բերքատու են՝ 8-12 տարեկան հասակում ապահովում են մինչև 150 կգ բերք: Պտուղները հասունանում են հուլիսի վերջին, օգոստոսին և պահվում են 10-ից 20 օր</p>	<p>Ծառերը միջակ մեծության և միջակ աճեցողության են: Պտղաբերում են օղանխատերի և պտղաշիվերի վրա:</p>	<p>Պտուղներն ունեն միջակ կամ միջակից խոշոր չափեր՝ մինչև 125գ., կլորավուն են կամ տափակ կլորավուն, հարթ: Պտղամաշկը դեղնականաչավուն է՝ պատված կարմիր շերտերով (գուլերով): Ենթամաշկային կետերը սպիտակ գույնի են, նոսր դասավորված: Պտղամիսը սպիտակ է, հյութալի, նուրբ ու բուրավետ, թթվաքաղցր, գերազանց համային հատկանիշներով:</p>
<p><u>Ստարկինսոն</u></p> <p>Դելիշես սորտի կլոնն է. Հայտնաբերվել է ԱՄՆ-ի Օրեգոն նահանգում 1952թ. ՀՀ բերվել է 1976թ. և լայնորեն տարածվել գրեթե բոլոր պտղաբուծական մարզերում: Սպուրտիպի սորտ է:</p>	<p>Ձմեռային սորտերից է: Սորտն ունի միջակ աստիճանի ձմեռադիմացկունություն և չորադիմացկունություն:</p>	<p>Ծառերը վաղ են պտղաբերում՝ այգու հիմնումից հետո 3-րդ տարուց: Սորտն պահանջկոտ է և՛ ծառերի խնամքի, այնպես էլ բերքահավաքի ժամկետների նկատմամբ: Բերքահավաքն ուշացնելից պտուղները գերհասունանում են, իսկ ժամկետից շուտ հավաքելիս՝ թառամում: Բերքահավաքը կատարում են սեպտեմբերի II-րդ կեսին: Պտուղները պահվում են մինչև մարտ-ապրիլ:</p>	<p>Ծառերը թույլաճ են, փոքր, նոսր և հավաք պսակով: Պտուղները հիմնադրվում են միայն օղանխատերի վրա: Պտղաբերում է կանոնավոր և առատ՝ 1 ծառից ապահովում մինչև 80կգ բերք:</p>	<p>Պտուղները միջուկ մեծության են կամ խոշոր՝ մինչև 180 գ., գեղեցիկ, երկարավուն կոնաձև, պտղի ողջ մակերեսով, սկսած գագաթից, անցնող կողավորությամբ: Ինչպես Ստարկինսոնի Դելիշեսի բոլոր կլոնները, այնպես էլ Ստարկինսոնին բնորոշ են ափսի շուրջը դասավորված հինգ բարձր թմբերը: Պտղամաշկը համատարած պատված է մուգ մորեգույն գունավորմամբ և անփայլ թավով: Ենթամաշկային կետերը դեղին գույնի են, պտղամիսը դեղնավուն-սպիտակ է, համեղ թեթև բուրմունքով, քաղցր, առանց թթվության:</p>
<p><u>Ռենետ Սիմիրենկո</u></p> <p>Հայտնաբերվել է գիտնական-պտղաբույծ Լ. Պ. Սիմիրենկոյի</p>	<p>Ձմեռային սորտերից է: Ծառերը վաղ են անցնում պտղաբերման՝ 4-5-րդ տարուց:</p>	<p>1 ծառից լրիվ բերքատվության շրջանում մինչև 400 կգ է: Պտուղները հավաքում են սեպտեմբերի վերջից մինչև հոկտեմբերի կեսերը և</p>	<p>Ծառերը ունեն շիվառաջացման բարձր ունակություն:</p>	<p>Սորտը հայտվի է կանաչ գույնի հյութալի և համեղ պտուղներով, որոնք իրենց համային հատկանիշները պահում են մինչև ապրիլ ամիս և ավելի: Պտուղները խոշոր են մինչև 250 գ, բարձր</p>

կողմից իր հոր կալվածքում (Ուկրաինայի Մլեկո գյուղում)	Մորտը չորադիմացկուն է և քամեղիմացկուն:	օգտագործում նոյեմբերի կեսերից:		կոնաձև, իսկ միջակները և փոքրերը՝ ավելի տափակ, լավ ամրացված ծառերին: Պտղամաշկը հաստ է, կանաչ, հասունանալիս՝ դեղնականաչավուն, փայլուն՝ պատված լավ նշմարելի սպիտակ ենթամաշկային կետերով: Պտղամիսը սպիտակավուն կանաչ է, շատ հյութալի, մանրահատիկ, թթվաշաքարոց, համեղ և թույլ բուրմունքով:
<u>Ֆուջի</u>	Ծաղկման շրջանի երկար տեվողությամբ միջահաս սորտ է:	Հասունանում է հոկտեմբերի վերջին: Պահունակությունը տևական է, այդ ընթացքում խտղամիսը չի փափկում:	Միջին աճեցողության, երկար ճյուղեր առաջացնող սորտ է:	Պտուղն օժտված է գերազանց համային հատկանիշներով, հյութալի է, քաղցր խրթխրթան, սերուցքագույն պտղամսով:
<u>Գալա</u>	Միջահաս սորտ է	Հասունանում է սեպտեմբերին:	Այս սորտը աչքի է ընկնում ուշ ծաղկմամբ և կարող է փոշոտիչ հանդիսանալ վաղ և ուշ ծաղկող սորտերի համար: Պահունակ է:	Պտուղը 90-100% կարմիր է, մուգ կարմիր գծերով: Ունի քաղցր համ, խրթխրթան, ամուր, հյութալի պտղամիս:
<u>Մեղրուզ</u> Ստացվել է ԱՄՆ-ում՝ Ջոնաթան և Ռեդ Դեյվիս սորտերի տրամախաչումից	Ձմեռային հասունացման սորտ է: Քաղի հասունացումը տեղի է ունենում հոկտեմբերի I-ին տասնօրյակում, իսկ սպառողականը՝ նոյեմբերից-ապրիլ: Պտուղները փոխադրունակ են:	Մերմնաբույսերի վրա պատվաստված սորտերը բերքի են անցնում այգին հիմնելուց 5-6-րդ տարում 1 ծառից տալով 115 կգ բերք:	Ծառերը ուժեղաճ են՝ միջակ խտության սաղարթով: Պտղաբերում է պտղաշիվերի օղափոսերի և նախորդ տարվա աճերի վրա:	Պտուղները խոշոր են՝ 15 գ, կլոր կոնաձև, Մեծությամբ և ձևով միատարր են, Պտղամաշկը կոպիտ է, հարթ, փայլուն: Պտղի հիմնական գույնը կանաչադեղին է, մուգ կարմիր գծավոր ծածկող գույնով: Պտղամիսը սպիտակասերուցքայի է, ամուր, նուրբ, շա հյութալի, ուժեղ բուրմունքով և թթվաշաքարոց համով:

Խոշոր՝ 300 գ.-ից բարձ

Միջին մեծության՝ 120-300գ.

Մանր՝ 40-120գ.



ՀՀ-ում տարածված տանձենու որոշ սորտերի համառոտ բնութագիրը

Աղյուսակ 1բ

<i>Սորտի անվանումը, ծագումը</i>	<i>Հասունացման ժամկետը և ցրտադիմացկունությունը</i>	<i>Բերքատվությունը Պտուղների պահունակությունը և փոխադրունակությունը</i>	<i>Աճման, պտղաբերման բնույթը</i>	<i>Պտղի մեծությունը, գույնը, համը</i>
<p><u>Անտառային գեղեցկուհի</u> Բելգիական սորտ է</p>	<p>Այս սորտը աշնանային հասունացմամբ սորտ է: Արարատյան դաշտում Անտառային գեղեցկուհին հասունանում է օգոստոսի սկզբներին, իսկ բարձրադիր վայրերում՝ սեպտեմբերի կեսերին:</p>	<p>Այգին հիմնելուց հետո բարձրաճ ծառերը բերքի են անցնում 5-6, իսկ սերկնիլենու արմատակալների վրա պատվաստվածներ՝ 3-4-րդ տարուց: 1 ծառից կարող է կազմակերպել մինչև 300 կգ բերք: Պտուղների որակը ավել է բարձրանում բերքահավաքից 15-20 օր պահելուց հետո: Սառնարանային պայմաններում կարելի է պահել 2-3 ամիս: Պտուղների փոխադրունակությունը բարձր չէ:</p>	<p>Ծառերը խոշոր կամ միջակ աճեցողությամբ են, լայն բրգաձև սաղարթով: Պտղաբերում են հիմնականում օղանիստերի վրա: Պտղաբերման պարբերականությունը թույլ է արտահայտված, լավագույն փոշոտիչներից են Կլապի սիրելին, Վիլյամս ամառային սորտերը: Լավ հարմարված է հանրապետության էկոլոգիական գործոններին: Ցրտադիմացկուն է, բարձր բերքատու է:</p>	<p>Պտուղները խոշոր են կամ միջակ մեծության, կշռում են մինչև 350գ: Կոնաձև են: Պտղամիսը հարթ է, փայլուն, հավաքելիս կանաչ, իսկ հասունանալիս՝ դեղին, վառ կարմիր թշով, շատ գեղեցիկ: Սորտին հատուկ է մուսկատային բուրմունքը, որը զգացվում է լրիվ հասունանալիս: Պտղամիսը սպիտակադեղին է, հալվող, քաղցր, գերազանց համով:</p>
<p><u>Բերե Բոսկ</u> Ֆրանսիական սորտ է՝ աշնանային հասունացմամբ</p>	<p>Պտուղները հասունանում են սեպտեմբերի կեսերին և պահվում մինչև նոյեմբերի վերջ: Սառնարանային պայմաններում կարող է պահվել 5-6 ամիս: Ունեն թույլ արտահայտված ձմեռադիմացկունություն: Տերները տուժում են օդի չորությունից և բարձր ջերմաստի-</p>	<p>Տաս տարեկան ծառերը տալիս են մինչև 80 կգ բերք, իսկ լրիվ պտղաբերման շրջան անցածները մինչև՝ 200կգ բերք: Պտուղները բարձրորակ են և փոխադրունակ</p>	<p>Լայն բրգաձև սաղարթով, միջակ աճեցողությամբ ծառեր են: Պտղաբերում են հիմնականում օղանիստիկի վրա: Պարբերականությունը շատ թույլ է արտահայտված: Ծառերը ունեն մասնակի ինքնափոշոտման հատկություն:</p>	<p>Պտուղները խոշոր են կամ միջակ մեծության մինչև 300գ քաշով: Երկարավուն տանձաձև են նուրբ ու բարակ մաշկով: Բերքահավաքի ժամանակ բաց կանաչ գույնի են՝ ամբողջությամբ պատված ժանգափծերով: Ընդ որում այս երևույթը խոնավ վայրերում ավելի ցայտուն է արտահայտված: Պտղամիսը սպիտակադեղինավուն է, նուրբ, հյութալի, հալվող, քաղցր, դուրեկան թթվությամբ:</p>

	ճանից:			
<p><u>Չմեռնուկ</u> Տեղական սորտ է Չմեռային հասունացմամբ</p>	<p>Պտուղները հավաքում են հոկտեմբերին, իսկ օգտագործման համար պիտանի են դառնում նոյեմբերի սկզբներից և պահպանվում են մինչև մարտ-ապրիլ ամիսներ:</p>	<p>Բերքի է անցնում 3-4-րդ տարում: Սորտը բարձր բերքատու է: Լրիվ բերքատվություն անցած ծառերից ստանում են մինչև 300կգ բերք: Պտուղները փոխադրունակ են: Աչքի են ընկնում բարձր ցրտադիմացկունությամբ, երկարակյաց են, հիվանդությունների և վնասատուների նկատմամբ բարձր իմունությամբ:</p>	<p>Պտղաբեր է հիմնականում օղանիստերի և պտղաշիվերի վրա պտղաբերման պարբերականությունը թույլ է արտահայտված Լավագույն փոշոտիչներն են Անտառային գեղեցկուհին, Մալաչան, Կլապի սիրելին</p>	<p>Պտուղները մանր են կշռում են մինչև 300գ: Կլորավուն են, հազվադեպ թույլ երկարվուն, հարթ կամ թույլ խորդուրորդ: Մաշկը կոպիտ է, հաստ, բաց կանաչ, լրիվ հասունացման ժամանակ դեղնականաչավուն մանր ցրված կետերով: Պտղամիսը սպիտակ է, հյութալի, խոշոր քարաբջիջներով, թույլ թթվաշաքարոց, զովացուցիչ թթվությամբ, միջակ որակի:</p>
<p><u>Մալաչա</u> Հայաստանի հնագույն տեղական սորտերից է</p>	<p>Ամառային հասունացմամբ սորտերից է: Պտուղները հասունանում են օգոստոսի կեսից մինչև սեպտեմբերի առաջին տասնօրյակը: Ծառերը բերքատվության են անցնում 5-6-րդ տարում: Ծառերը աչքի են ընկնում բավարար ցրտադիմացկունությամբ և չորադիմացկունությամբ:</p>	<p>Մեկ ծառից կարող են տալ մինչև 300կգ բերքի: Պտուղների որակը բարձր է լինում, եթե նրանց սպառողական հասունացումը տեղի է ունենում ծառի վրա և օգտագործվում է աստիճանաբար հավաքելով: Բերքը հավաքելուց հետո պտուղները պահվում են 2-3 օր: Ավելի երկար պահելով դրանց որակը ընկնում է:</p>	<p>Պտղաբերում են օղանիստերի, նիզակների և պտղաշիվերի վրա: Պարբերականությունը թույլ է արտահայտված: Պտուղների բարձր որակը, վաղահասությունը, ծառին ամուր կպած լինելը առանց պարբերականության պտղաբերելը այս սորտի արժանիքներն են:</p>	<p>Պտուղները միջակ մեծության են, կշռում են մինչև 220գ երկար-տանձաձև, զրեթե հարթ մաշկով: Պտղամաշկը միագույն դեղնականաչ է, լրիվ հասունանալիս՝ դեղին, հարթ, նուրբ, մոմային փայլով: Հոտավետ է, գեղեցիկ ու գրավիչ: Պտղամիսը սպիտակ է, եզրերում դեղնականաչավուն, սրտիկի շուրջ քարաբջիջների առկայությամբ, հյութալի է, քաղցր, թույլ թթվայնությամբ, դուրեկան բուրմունքով:</p>
<p><u>Վիլյամս</u> Վիլյամս ամառային Բոն Կրեյտեն Վիլիամս Բարտլետ Դոբբի կրեյտյանին Պատահական</p>	<p>Ցրտադիմացկունությունը անբավարար է: Տուժում է ծառը նաև չորությունից: Բերքատվության են անցնում 4-5-րդ տարում: Պտղաբերում</p>	<p>1 ծառից տալիս են մինչև 300 կգ բերք:</p>	<p>Ծառը միջակ մեծության է, նեղ-բրգաձև, նոսր սաղարթով: Ունեն ուժեղ աճեցողություն:</p>	<p>Պտուղները խոշոր կամ միջակ են մինչև 220գ քաշով երկարաձև կամ զանգակաձև: Մաշկը բարակ է, մուսադեղնագույն, լրիվ հասունացման ժամանակ՝ բաց դարչնագույն կետերով, արևի կողմից նուրբ կարմիր գունավորված: Պտղամիսը սպիտակադեղնավուն է,</p>

սերմնաբոյս է, հայտնաբերվել է 1770թ. Անգլիայում:	են օղանիստերի վրա: Պտուղները հասունանում են օգոստոսի կեսերից մինչև սեպտեմբերի կեսերը:			շատ նուրբ հյութալի, հալվող, քաղցր, հաճելի թթվությամբ և մուսկատի բուրմունքով:
<u>Հոսույի /նաշի/</u>	Տանձենու բարձրորակ սորտ է, որը հասունանում է սեպտեմբերի կեսերին:		Ծառերը ուղղաձիգ են, միջին բարձրության:	Պտուղը խոշոր է, նարնջաշագանակագույն, գեղեցիկ շագանակագույն գազաթով: Պտուղները խրթխրթան են, հաճելի բույրով, ամուր պտղամսով:

Խոշոր՝ 300 գ.-ից բարձր
Միջին մեծության՝ 120-300գ.
Մանր՝ 40-120գ



ՀՀ-ում տարածված սերկևիլենու որոշ սորտերի համառոտ բնութագիրը

Աղյուսակ 1գ

<i>Սորտի անվանումը, ծագումը</i>	<i>Հասունացման ժամկետը և ցրտադիմացկունությունը</i>	<i>Բերքատվությունը Պտուղների պահունակությունը և փոխադրունակությունը</i>	<i>Աճման, պտղաբերման բնույթը</i>	<i>Պտղի մեծությունը, գույնը, համը</i>
<p><u>Արարատի 1.</u> (<u>խնձորաձև թթվաշ</u> <u>№ 9</u>)</p> <p>Այս սորտը լայնորեն տարածված է Երևանի, ինչպես նաև Հոկտեմբերյանի, Արտաշատի ու Նոյեմբերյանի շրջանների այգիներում</p>	<p>Ուշահաս սորտ է: Ձմեռադիմացկուն է համարվում և խորհուրդ է տրվում սերկևիլի մշակման բոլոր գոտիներում լայնորեն բազմացնել</p>	<p>Բերքատու և պահունակ է սորտ</p>	<p>Բարձրաճ ծառեր են կլորավուն կամ լայն փռված սաղարթով: Ունիվերսալ նշանակության պտուղները մեծ արժեք են ներկայացնում</p>	<p>Պտուղները միջին մեծության են: Կշռում են մինչև 200գ կլոր կամ տափակ կլորավուն են: Պտղամաշկը ամուր է, հաստ բաց դեղնավուն, կանաչերանգով: Մաշկը խիտ թավապատ է, բաց մոխրադեղնավուն կամ մոխրագույն: Պտղամիսը դեղնավուն է կամ բաց դեղին, ամուր, թթվաշ, միջին տոնաբանությամբ: Աչքի է ընկնում ուժեղ բուրմունքով:</p>
<p><u>Արևիկ</u></p> <p>Այս սորտը տարածված է Մեղրու շրջանում</p>	<p>Պտուղները վաղահաս են</p>	<p>Սորտը բարձր բերքատու է: Պահունակությունը միջակ է, օգտագործվում է թարմ վիճակում:</p>	<p>Ծառերը միջակ աճեցողության են: 45-50 տարեկան ծառերը ունեն 5-7մ բարձրություն և 25-30սմ բնի հաստություն:</p>	<p>Պտուղները միջակ են կամ խոշոր մինչև 420գ կշռով, կլորավուն խնձորաձև, հարթ: Գագաթը շատ խորը չէ և անհարթ է: Պտղամաշկը պինդ է, բարակ հարթ, կանաչ երանգով, գրեթե լերկ: Ենթամաշկային կտերը կանաչ են: Պտղամիսը բաց գույնի է, գրեթե սպիտակ, փխրուն, նուրբ, հյութալի, քաղցր ոչ շատ ուժեղ բուրմունքով, քիչ քնակությամբ քարաբջիջներով:</p>
<p><u>Մեղրու № 2</u> (<u>խնձորաձև թթվաշ</u>)</p>	<p>Հասունանում է սեպտեմբերի վերջին,</p>	<p>Սորտը պահունակ է և ունի տնտեսական բարձր արժեք:</p>	<p>Ծառերը ուժեղաճ են և ունեն 6-7մ բարձրություն:</p>	<p>Պտուղները խոշոր են մինչև 400գ կշռով, տափակ-կլորավուն խնձորանման</p>

<p>2) Այս սորտը հանդիպում է Մեղրու շրջանում:</p>	<p>աչքի է ընկնում ցրտադիմացկունությամբ, բայց հիվանդությունների նկատմամբ ունի միջակ դիմացկունություն:</p>	<p>Բերքատու է և խորհուրդ է տրվում աճեցնել որպես ունիվերսալ սորտ:</p>		<p>պտուղներ ունեն: Պտղամաշկը նուրբ է, պինդ, բաց դեղնավուն, քիչ թավոյամբ: Պտղամիսը բաց սերուցքագույն է, պինդ, հյութալի, թթվաշ, բուրավետ, քարաբջիջները քիչ քանակությամբ դասվորված են սրտիկի շուրջ:</p>
<p><u>Անի</u> Ստացել է Է.Ն.Գաբրիելյան Բեկետովսկայան Երևանի 126 և Անուշ սորտերի տրամախաչումից</p>	<p>Հասունանում է սպտեմբերի վերջին հոկտեմբերի կեսերին և օգտագործվում մինչև մայիս: Ցրտադիմացկուն սորտ է համարվում</p>	<p>Ծառերը մեկ հեկտարից կարող են տալ միջինը 180g բերք: Սակայն հիվանդությունների նկատմամբ դիմացկունությունը ցածր է: Պտուղները օգտագործվում են ինչպես թարմ սպառման համար, այնպես էլ վերամշակման և տարբեր կերակրատեսակների մեջ օգտագործման նպատակով:</p>	<p>Ծառերը արագաճ են և վաղ պտղաբերող, կլորավուն և միջակ խտությամբ սաղարթով:</p>	<p>Պտուղները շատ խոշոր են մինչև 900գ լայն կողավոր, տանձաձև: Պտղամաշկը ոսկեդեղին է կամ բաց դեղին, բարակ, հարթ, մոմային թավով պատված մեծ լավ նկատելի և կանաչավուն ենթամաշկային կտերով: Պտղամիսը կանաչասպիտակավուն է կամ սպիտակասերուցքագույն, հյութալի, շատ բուրավետ, թթվաշաքարային, թույլ տոտիպությամբ, առանց քարաբջիջների:</p>
<p><u>Նոյեմբերյանի ուշահաս</u></p>	<p>Սորտը բավական ցրտադիմացկուն է: Ուշահաս է:</p>	<p>Պտուղները բարձր պահունակություն ունեն: Գործածումը ունիվերսալ է: Սորտը բերքատու է:</p>	<p>8-9մ բարձրության, ուժեղ աճեցողության ծառեր են: Ինքնափոշոտվող է, իսկ այլ սորտերի փոշոտմամբ տալիս է բարձր բերք:</p>	<p>Պտուղները խոշոր են մինչև 400գ քաշով, տանձաձև: Պտղի մակերեսը հարթ է կամ թույլ կողավոր: Մաշկը դեղնասևադեղնագույն է, հարթ, ուժեղ մոմափառոտ: Պտղամիսը մեծ քանակի քարաբջիջներ են, սերուցքագույն է, զգալի բուրմունքով, ոչ հյութեղ, թթվաշ, կոպիտ:</p>

Խոշոր՝ 300 գ.-ից բարձ
Միջին մեծության՝ 200-300գ.
Մանր՝ 80-150գ.



Հ ՀՀ-ում աճող ծիրանենու որոշ սորտերի համառոտ բնութագիրը

Աղյուսակ 2ա

<i>Սորտի անվանումը և ծագումը</i>	<i>Հասունացման ժամկետը և ցրտադիմացկունու- թյունը</i>	<i>Բերքատվությունը Պտուղների պահունակությունը և փոխադրունակությունը</i>	<i>Աճման, պտղաբերման բնույթը</i>	<i>Պտղի մեծությունը, գույնը, համը</i>
1	2	3	4	5
<u>Երևանի (Շալախ)</u> <u>տեղական</u>	Արարատյան դաշտում հունիսի 20-ից մինչև հուլիսի 10-ը, իսկ նախալեռնային գոտում՝ հուլիսի 5-20-ը: Ծառերն ունեն բարձր ձմեռադիմացկունություն	Բերքատվության են անցնում 4-5-րդ տարուց: 30 տարեկան ծառերը տալիս են 150- 300 կգ բերք:	Խոշոր, փարթամ ծառեր են՝ ուժեղ ճյուղավորվածությամբ: Պտղաբերում են 1 տարեկան ճյուղերի, փնջաճյուղերի և խթանների վրա:	Պտուղները խոշոր են՝ 65-70, առանձին դեպքերում 120- 150գ քաշով, երկարավուն: Մաշկը ոսկեգույն է, մոռագույն թշով, պտղամիսը դեղին, դուրեկան Քաղցրաթթվա, կորիզից անջատվող Պիտանի է ինչպես թարմ օգտագործման, այնպես էլ բարձրորակ կոմպոտների և հյութերի պատրաստման համար:
<u>Խոսրովենի</u> <u>տեղական</u>	Հուլիսի 10-20-ը: Ծառերն ունեն բարձր և միջին ձմեռադիմացկունություն	Բերքատվության են անցնում 4-5-րդ տարուց Բերքատվությունը ծառից 150-200կգ է:	Ծառերը փարթամ են, շատ հզոր, գնդաձև սաղարթով, փոված ճյուղերով: Պտղաբերում են 1 տարեկան ճյուղերի, փնջաճյուղերի և խթանների վրա:	Պտուղները միջակ մեծության են և խոշոր՝ 40-ից մինչև 60գ, կլորավուն, էլիպսաձև, կողքերից քիչ սեղմված: Մաշկը դեղնասուկեգույն է, արևի կողմից 2/3 մասով կարմիր: Պտղամիսը ոսկեգույն է, հյութալի, մսալի, միջակ ամրությամբ, թթվաշա-քաղցր, դուրեկան համով, թույլ բուրմունքով, բարձրորակ, կորիզից լավ անջատվող: Պիտանի է թարմ օգտագործման և վերամշակման համար:
<u>Համբան</u> <u>(Սպիտակ ծիրան)</u> <u>տեղական</u>	Հուլիսի 20- ից մինչև օգոստոսի 5-10-ը: Ծառերն ունեն միջին ձմեռադիմացկունություն	Բերքատվության են անցնում 4-5-րդ տարուց Բերքատվությունը ծառից 150- 180 կգ է:	Միջակ մեծության ծառեր են՝ կլորավուն սաղարթով, կանգուն ճյուղերով: Պտղաբերում են 1 տարեկան ճյուղերի, փնջաճյուղերի և խթանների վրա:	Պտուղները միջակ մեծությամբ՝ 40, առանձին դեպքերում մինչև 55գ, կլորավուն, քիչ սրված գազաթով, մաշկը հաստ, պինդ, սպիտակա-դեղնավուն, արևի կողմից 1/3 մասով գեղեցիկ

				մորեգույն: Պտղամիսը ևս սպիտակագույն է, մսալի, պինդ, կրճկային, միջակ հյութալի, թույլ քաղցրությամբ, լրիվ հասունացման շրջանում շատ քաղցր, առանց բուրմունքի, միջակ որակի, կորիզից կիսաանջատվող: Օգտագործվում է թարմ և վերամշակված վիճակում (ստացվում են բարձրորակ մուրաբաներ, չրեր և ցուկատներ). կոմպոտի և հյութի պատրաստման համար պիտանի չէ:
<u>Սաթենի</u> (<u>Թափարգա</u>) <u>տեղական</u>	Հուլիսի 10-25-ը: Ծառերն ունեն բարձր ձմեռադիմացկունություն	Բերքատվությունը նինչև 150 կգ ծառից:	Բնորոշ է լավկան սաղարթը: Ծառերը միջակ աճեցողությամբ և ճյուղավորվածությամբ են: Միամյա շիվերը բարակ են, կախ ընկած: Պտղաբերում են 1 տարեկան ճյուղերի, փնջաճյուղերի և խթանների վրա:	Պտուղները միջակ մեծության են՝ 35-ից մինչև 45գ, անհամաչափ կլորավուն, կողքերից սեղմված, մաշկը պինդ է, փայլուն, դեղնականաչավուն, արևի կողմից կեսով վառ կարմիր. պտղամիսը դեղին գույնի է, պինդ, շատ քաղցր, հաճելի համով, թույլ բուրմունքով, կորիզից լավ անջատվող: Օգտագործվում է թարմ և վերամշակված (մուրաբաներ, չրեր) վիճակում. Աչքի է ընկնում պտուղներում չոր նյութերի և շաքարների բարձր պարունակությամբ. կոմպոտների պատրաստման համար պիտանի չէ:
<u>Վաղահաս</u> <u>վարդագույն</u> Ստացվել է կանաչենի և Երևանի սորտերի տրամախաչումից՝	Միջահաս է: Սորտը ունի բարձր սրտադիմացկունություն	Պտուղները պիտանի է թարմ օգտագործման և վերամշակման համար:	Ծառը միջին աճեցողության է, խիտ, գնդաձև սաղարթով:	Պտուղները մինչև 75գ քաշով, ձվաձև: Պտղամաշկը միջին հաստության է, բաց դեղին, վառվռագույն թշկկով: Պտղամիսը սերուցքագույն է, նուրբ, հյութալի, համը քաղցրաթթվա՝:

Մ. Բ. Մանահյանի կողմից.				
<u>Մասիս</u> Ստացել է սելեկցիոներ Մ. Մանահյանը Համբան և Օրդուբադի սորտերի տրամախաչումից:	Վաղահաս սորտ է: Պտուղները հասունանում են հունիսի 22-ից մինչև հուլիսի 5-ը:	Երիտասարդ ծառի բերքը մինչև 150 կգ է հասնում:	Ծառը միջակ մեծության է, փարթամ աճող, գնդաձև սաղարթով: Պտուղները պիտանի են թարմ օգտագործման և վերամշակման համար: Լավագույն փոշոտիչներն են Երևանի, վաղահաս վարդագույն, Խոսրովենի և Սաթենի սորտերը:	Պտուղները խոշոր են մինչև 110գ քաշով, երկարավուն-ձվաձև, սրացած կամ թույլ ձգված գագաթով, կողերից թույլ սեղմված: Մաշկը միջակ հաստության է, թույլ թավոտ, դեղձաձև, վառ գունավորված թշիկով: Պտղամիսը նուրբ, հյութալի, քաղցրաթթվաշ, շատ դուրեկան համով և հաճելի բուրմունքով է:
<u>Ղևնդի</u>	Ուշահաս սորտ է: Հասունանում է հուլիսի 15-ից մինչև օգոստոսի 5-ը: Թույլ ցրտադիմացկուն է: Լավ փոխադրունակ է:	Շատ բերքատու սորտ է, տալիս է մինչև 300 կգ պտուղ 1 ծառից: Պտուղները պիտանի են թարմ վիճակումն գործածելու և մուրաբա և չիր պատրաստելու համար:	Ծառն ունի միջակ աճեցողություն, հասնում է մինչև 8մ-ի:	Պտուղները միջակ մեծության են մինչև 50գ քաշով, կլորավուն: Մաշկը հաստ, թույլ թռավոտ, պտղամսից չանջատվող, սպիտակ-դեղնավուն, երբեմն արևի կողմը թույլ մոռագույն կարմրությամբ: Պտղամիսը սպիտակ է, մսալի, անհամ, քիչ քաղցրությամբ, առանց բուրմունքի:

Խոշոր՝ 70 գ.-ից բարձ

Միջին մեծության՝ 20-60գ.

Մանր՝ 10-20գ.



ՀՀ-ում աճող դեղձենու որոշ սորտերի համառոտ բնութագիրը

Աղյուսակ 2բ

<i>Սորտի անվանումը</i>	<i>Հասունացման ժամկետը և ցրտադիմացկունությունը</i>	<i>Բերքատվությունը, պտուղների պահունակությունը և փոխադրունակությունը</i>	<i>Աճման, պտղաբերման բնույթը</i>	<i>Պտղի մեծությունը, ձևը, գունավորումը, համը</i>
1	2	3	4	5
<u>Չափրանի</u>	Հասունանում է սեպտեմբերի կեսից մինչև հոկտեմբերի վերջը: Ծառերն ունեն բարձր ձմեռադիմացկունություն: Տարածված է դեղձենու մշակության բոլոր շրջաններում, դիմանում է մինչև - 30° կարճատև ցրտին և համարվում է դեղձենու ամենացրտադիմացկուն սորտերից մեկը:	Բերքի են անցնում 3-4-րդ տարուց: Բերքատվությունը շատ բարձր է՝ 100- 150կգ ծառից: Փոխադրունակ սորտ է:	Ծառերը միջակ մեծության են, բավականին ուժեղ ճյուղավորված:	Պտուղները խոշոր են կամ միջակ, մոտ 150գ, ձվաձև, կողքերից սեղմված, գափրանի գույնի, 3/4 մասով պատված գծավոր կարմրությամբ, շատ գեղեցիկ: Պտղամիսը նարնջագույն է, կորիզի մոտ կարմիր, պինդ, խիստ կրճկային, միջակ հյութալի, քաղցր, թույլ տոտիպությամբ և թթվությամբ, կոպիտ, ուժեղ բուրմունքով, կորիզին կպած: Ստացվում են բարձրորակ կոմպոտներ և մուրաբաներ:
<u>Գուլբեն Յուբիլեյ Ամերիկյան</u>	Վաղ հասունացող է՝ օգոստոսի առաջին և երկրորդ տասնօրյակներում:	Վաղահաս և վաղ պտղաբերող սորտ է՝ ցածր փոխադրունակությամբ: Մեկ ծառից տալիս է 80-90կգ բերք:	Ծառերը խոշոր են, փոված սաղարթով հաստ, մորեզույն երանգ ունեցող միամյա ճյուղերով:	Պտուղները միջակ մեծության են, մինչև 130գ քաշով, օվալաձև, կողերից դեպի գագաթը սեղմված, մաշկը ոսկեդեղին, կես մասով բոսորագույն, թավապատ, պտղամսից անջատվող: Պտղամիսը դեղնանարնջագույն է, նուրբ թելավոր, հյութալի, միջին քաղցրությամբ, կորիզից լավ անջատվող: Պիտանի է թարմ օգտագործման համար:

<u>Լիմոնի</u>	Հասունանում է սեպտեմբերի սկզբից մինչև սեպտեմբերի վերջը:	Խոշոր ծառեր են՝ միջակ ճյուղավորվածությամբ, 3-4-րդ տարուց անցնում են պտղաբերման, բերքատվությունը ծառից 50-1000 կգ է և ավելի:	Խոշոր ծառեր են՝ միջակ ճյուղավորվածությամբ, 3-4-րդ տարուց անցնում են պտղաբերման:	Պտուղները խոշոր են կամ միջակ մեծության, 175գ, էլիպսաձև, ծայրը կլոր: Մաշկը դեղին-նուկեգույն միագույն է կամ թեթև գունավորված, շատ փոքր մասով կարմիր գծերով: Պտղամիսը դեղին-նուկեգույն, միջակ ամրությամբ, կրճկային, հյութալի, քաղցրաթթվաշ, ուժեղ բուրմունքով, համային բարձր հատկանիշներով: Կորիզի մոտ պտղամիսը բոլորովին կարմրություն չունի: Կորիզը շագանակագույն է, պտղամսից չանջատվող: Օգտագործվում է թարմ սպառման և վերամշակման (կոմպոտներ, մուրաբաներ) համար:
<u>Լոձ գծավոր (շերտավոր) տեղական</u>	Հասունանում է սեպտեմբերի 10-25-ից մինչև հոկտեմբերի սկիզբը: Տարածված է դեղձենու մշակության բոլոր շրջաններում: Շատ բերրի է, ցրտադիմացկուն:	Բարձր բերքատու են՝ 100-150կգ ծառից: Փոխադրունակ է:	Ծառերը խոշոր են, ուժեղ ճյուղավորված: Բերքի են անցնում 3-4-րդ տարուց:	Պտուղները խոշոր են կամ միջակ մեծության, միջին քաշը 160գ է: Կլոր են, դեղնա-սպիտակավուն, սերուցքագույն, համեմատաբար թույլ թավոտ, 2/3 մասով շերտավոր կարմրությամբ: Պտղամիսը սերուցքագույն է, պինդ, կրճկային, հյութալի, թթվաշաքարային, զգալի բուրմունքով, բարձրորակ, շատ համեղ, կորիզի մոտ թույլ գունավորված: Կորիզը կարմիր է, պտղամսին կպած: Օգտագործվում է և թարմ վիճակում, և կոմպոտների, մուրաբաների պատրաստման համար: Փոխադրունակ է:
<u>Ճուղուրի</u>	Հասունանում է սեպտեմբերի վերջից	Բարձր բերքատու են՝ մինչև 200 կգ ծառից: Փոխադրունակությունը	Խոշոր ծառեր են՝ ուժեղ ճյուղավորվածությամբ, բերքի են	Պտուղները խոշոր են կամ շատ խոշոր՝ 180, երբեմն մինչև 300 գ, հակառակ ձևով, համար:

	մինչև հոկտեմբերի վերջը: Դասվում է արժեքավոր տեղական սորտերի շարքին: Բերրի է, ուշահաս:	լավ է:	անցնում 3- 4-րդ տարուց:	հիմքում սեղմված: Պտղամաշկը սպիտակա-կանաչավուն է, 1/2 մասով ցրված կամ գծավոր բալագույն կարմրությամբ, շատ գեղեցիկ: Պտղամիսը սերուցքագույն է, կորիզի մոտ քիչ գունավորված, պինդ, կոպտավուն, մսալի, կրճկային, միջակ հյութալի, քաղցր, հաճելի թթվությամբ, բուրավետ, բարձրորակ: Կորիզը կարմիր է, պտղամսին կպած: Պիտանի է թարմ օգտագործման, հատկապես վերամշակման (կոմպոսներ, մուրաբաներ) համար:
<u>Ուսպելի</u> Ի.Ն. Ռյաբովի սորտերից է	Վաղահաս է. պտուղները հասունանում են օգոստոսի առաջին և երկրորդ տասնօրյակներում: Վերամշակման համար օգտագործվող ամենավաղահաս դեղնամիս սորտն է:	Պտղաբերման են անցնում 3-րդ տարուց՝ մեկ ծառից տալով 80կգ բերք:	Ծառերը միջակ աճեցողության են. միամյա ճյուղերը կարմրադարչնագույն են՝ պատված բազմաթիվ մանր ոսպնյակներով:	Պտուղները միջակ չափի են, 130 գ. քաշով, ձվաձև: Մաշկը թույլ թավոտ է, պտղամսից չանջատվող, նարնջագույն, ծածկող գույնը մուգ կարմիր է և զբաղեցնում է պտղի մակերեսի 25-50%-ը: Պտղամիսը նարնջադեղին է, կորիզի մոտ թույլ կարմիր, կրճկրճան, միջակ հյութալի, դուրեկան համով: Կորիզը պտղամսից չի անջատվում: Պտուղներն օգտագործվում են թարմ գործածության և վերամշակման նպատակներով:
<u>Ֆանտազիա /նեկտարին/</u> Ստեղծվել է Կալիֆորնիայում:	Յրտադիմացկուն է	Շատ բերքատու սորտ է:	Ծառերն ուժեղ աճեցողության են:	Պտուղները բարձրորակ են, պտղամիսը դեղին, կորիզից հեշտ անջատվող /ճղովի/, Պտուղը խոշոր է, գրեթե ամբողջությամբ կարմիր, հարթ, գազախի մասում փայլուն:
<u>Նարինջի</u>	Նարինջի վաղահասը	Բերքը 60-80-100- 150 կգ և ավելի	Ծառերի սաղարթը միջակ չափերի է,	Պտուղները խոշոր են և շատ խոշոր՝ 150-180-

վաղահաս	հասունանում է օգոստոսի կեսից մինչև օգոստոսի վերջը, միջահասը՝ սեպտեմբերի երկրորդ տասնօրյակում, իսկ ուշահասը՝ սեպտեմբերի վերջին, հոկտեմբերի սկզբին:	ծառից: Լայն տարածում ունի դեղձենու մշակության բոլոր շրջաններում: Դեղձի տեղական սորտերի մեջ լավագույնն է գեղեցկությամբ և որակով:	գնդաձև, բավական ուժեղ ճյուղավորված: Պտղաբերում են 3-4-րդ տարուց:	250, մինչև 380գ, կլոր, դեղնա-նարնջագույն, տարբեր աստիճանի շառագունած, պտղամիսը դեղին է, պինդ, հյութալի, թթվաշաքարոտ, բուրավետ, բարձրորակ: Կորիզը կարմիր գույնի է, պտղամսին կպած: Պիտանի է թարմ սպառման, վերամշակման (կոմպոտներ, մուրաբաներ, հյութեր) համար: Դեղձի լավագույն կոմպոտներն ստացվում են այդ սորտից:
Նարինջի միջահաս /Այգեստանի Գտնվել է Երևան քաղաքի Այգեստանի այգիներում	Միջահաս է, հասունացումը սկսվում է սեպտեմբերի սկզբից մինչև 20-ը:	Բարձր գնահատվող սորտ է թարմ վիճակում գործածելու և կոմպոտներ պատրաստելու համար:	Ծառն ունի միջակ աճեցողություն:	Պտուղների քաշը տատանվում է 80-160գ սահմաններում, կլորչավուն, դեղին, մինչև կեսը բալագույն կարմիր շերտավոր կարմրությամբ: Մաշկը ուժեղ թավոտ է, պտղամիսը դեղին, պինդ, մսալի, քաղցր, հաճելի թթվությամբ ու ուժեղ արոմատով:
Ճղովի Նարինջի /Այգեստանի Գտնվել է Երևան քաղաքի հին այգիներում	Հասունանում է օգոստոսի 2-րդ կեսին, սեպտեմբերի սկզբներին:	Միջակ, բերրի սորտ է: Շատ արժեքավոր է թարմ վիճակում գործածելու, ինչպես նաև կոմպոտներ և մուրաբաներ պատրաստելու համար:		Պտուղները լինում են միջակ մեծության մինչև 180 գ քաշով, լայն էլիպսաձև, գրեթե աննկատելի կտուցով: Մաշկը բավական պինդ է, ուժեղ թավոտ, ոսկեգույն, մակերեսի զգալի մասը ծածկված է կարմրությամբ: Պտղամիսը ոսկեգույն, միջակ հյութալի, նուրբ թելոտ, կորիզից անջատվող, թթվաշաքարոտ, ուժեղ արոմատով:
Սանգլո	Շատ բարձրորակ, միջահաս նեկտարենու			Դեղին պտղամիս ունի: Պտղի շուրջ 75%-ը կարմիր է, մնացածը՝ դեղնավուն: Ունի շատ

/նեկտարին/	սորտ է:			լավ ապրանքային տեսք:
------------	---------	--	--	----------------------

Խոշոր՝ 300 գ.-ից բարձր

Միջին մեծության՝ 100-300գ.

Մանր՝ 800-100գ.



ՀՀ-ում աճող սալորենու որոշ սորտերի համառոտ բնութագիրը

Աղյուսակ 2գ

<i>Սորտի անվանումը և մրնծագումը</i>	<i>Հասունացման ժամկետը և ցրտադիմացկունությունը</i>	<i>Բերքատվությունը, պտուղների պահունակությունը և փոխադրունակությունը</i>	<i>Աճման, պտղաբերման բնույթը</i>	<i>Պտղի մեծությունը, ձևը, գունավորումը, համը</i>
1	2	3	4	5
<p><u>Աննա Շպետ</u>, <u>արևմտաեվրոպական</u></p>	<p>Սեպտեմբերի կեսից կամ վերջից մինչև հոկտեմբերի սկիզբը:</p>	<p>10 տարեկան ծառերը տալիս են մինչև 80 կգ բերք: Պահանջկոտ է արտաքին միջավայրի գործոնների նկատմամբ: Դասվում է վենգերկաների (հունգարասալորեն) շարքին: Փոխադրունակ է:</p>	<p>Ուժեղ աճող ծառեր են գնդաձև, խիտ սաղարթով: Պտղաբերում են 4-5-րդ տարուց: Հասունացած վիճակում պտուղները երկար մնում են ծառի վրա: Թարմ վիճակում շատ համեղ է:</p>	<p>Պտուղները խոշոր են՝ մինչև 45գ, գնդաձև, բութ գագաթով և հիմքով, թույլ արտահայտված կարով: Պտղի կեսերը համաչափ են: Մաշկը նուրբ կապույտ գույնի է, ամուր, պտղամսից անջատվող՝ պատված բազմաթիվ գորշ բծերով և գեղեցիկ թուխ կապտագույն փառով: Պտղամիսը թափանցիկ է, դեղնականաչ, լրիվ հասունացման ժամանակ ոսկեգույն, կորիզից լավ անջատվող, նուրբ, հալվող, հյութալի և քաղցր, կորիզի մոտ՝ թթվաչ: Պիտանի է թարմ օգտագործման և վերամշակման (չրեր, կոմպոտներ) համար:</p>

<p><u>Պերսիկովայա արևմտաեվրոպական</u></p>	<p>Հուլիսի 2-րդ կեսին, օգոստոսի սկզբին: Տարածված է հանրապետության բոլոր պտղաբուծական շրջաններում:</p>	<p>Բերքատվության են անցնում 4-րդ տարուց՝ 6-7-րդ տարուց տալով արանքային նշանակության բերք: 10 տարեկան ծառերի ցտացվում է 40կգ բերք: Փոխադրունակությունը լավ է:</p>	<p>Ուժեղ աճող ծառեր են՝ կլորավուն սաղարթով, տարածված ճյուղերով:</p>	<p>Պտուղները խոշոր են՝ մինչև 55գ, հարթ-կլոր: Պտղիկեսերը համաչափ են: Մաշկը կանաչադեղնավուն է, մուգ կարմիր, շառագունած՝ պատված բաց երկնագույն մոմային խիտ փառով: Պըտղամիսը ոսկյա դեղին, թեթևակի կանաչավուն, պինդ, բավական հյութեղ, բուրավետ, հաճելի թթվաշաքարը՝ թույլ տտիպությամբ, Կորիզից լավ անջատվող: Պիտանի է թարմ օգտագործման և վերամշակման համար:</p>
<p><u>Ջոյենտ պրուն (խսպոլինսկայա) ամերիկյան</u> Ստացել է Լ. Բերբանկը Կալիֆոռնիայում:</p>	<p>Օգոստոսի վերջին: Տարածված է Արարատյան դաշտում և հյուսիս-արևելյան շրջան-ներում:</p>	<p>Պտղաբերում են 5-6-րդ տարուց, առանց պարբերականության: 10 տարեկան ծառերը տալիս են մինչև 65կգ բերք: Լավագույն աղանդերային սորտ է՝ բարձր փոխադրունակությամբ:</p>	<p>Ուժեղաճ ծառեր են՝ խիտ և ձգված սաղարթով:</p>	<p>Պտուղները խոշոր են՝ մինչև 55գ, ձվաձև, միատարր: Մաշկը հաստ է, ամուր, պտղամսից լավ անջատվող, մուգ կարմիր՝ ծածկված մանր վարդագույն բծերով: Պտղի ողջ մակերեսը պատված է գեղեցիկ մանուշակագույն փառի հաստ շերտով: Պտղամաշկը թափանցիկ է, սաթագույն, կորիզից լավ անջատվող, նուրբ, հալվող, շատ հյութալի և քաղցր, կորիզի մոտ թեթևակի թթվությամբ: Պիտանի է ինչպես թարմ այնպես էլ վերամշակման համար:</p>
<p><u>Ռենկլոդ Ալտանա չեխական</u></p>	<p>Օգոստոսի երկրորդ կեսին: Բարձրորակ աղանդերային սորտ է՝ խոշոր պըտուղներով: Չորադիմացկուն է, քիչ</p>	<p>10 տարեկան ծառերը տալիս են 40-45կգ բերք: Փոխադրունակությունը բարձր է:</p>	<p>Ուժեղ աճող ծառեր են՝ ձգված սաղարթով, պտղաբերման են անցնում 4-5-րդ տարուց:</p>	<p>Պտուղները 35-45գ են, գնդաձև, կողերից թույլ սեղմված, պտղակոթը երկար է, հաստ, կանաչավուն: Մաշկը կանաչավուն է, կարմրաշագանակագույն գունավորված՝</p>

	է վնասվում վնասատուներից և հիվանդություններից:			պատված խիտ, կապույտ մոմային փառով: Պտղամիսը ոսկեգույն է, լրիվ հասունացման ժամանակ բուրավետ ու հյութալի, նուրբ, քաղցրաթթվաշ, գերազանց որակի, կորիզից կիսաանջատվող: Հրաշալի սեղանի սորտ է, պիտանի է նաև վերամշակման (չրեր, կոմպոտներ, մուրաբաներ) համար:
հունգարասալո ր Իտալական (<u>Վենգերկա</u> <u>խտայանակայա</u>) իտալական:	Օգոստոսի կեսից մինչև սեպտեմբերի կեսը:	13-14 տարեկան ծառերից ստացվում է 60կգ բերք: Տարածված է հյուսիսարևելյան շրջաններում: Պահանջկոտ է արտաքին միջավայրի գործոնների նկատմամբ: Լավ է աճում խոնավ պայմաններում: Պտուղները վնասվում են պտղակերից: Միջակ բերքատու սորտ է: Փոխադրունակ է:	Միջակ աճեցողությամբ ծառեր են. սաղարթը գնդաձև է, միջակ խտությամբ: Պտղաբերման են անցնում 4-5-րդ տարուց, իսկ ապրանքային նշանակության բերքի՝ է 6-7-րդ տարուց:	Պտուղները 35-40գ, երկարձվաձև պտղի գագաթը կլորավուն է, դեպի որովայնը՝ հատված: Որովայնակարը պտուղը բաժանում է երկու հավասար կեսերի: Մաշկը բարակ է, պինդ, պտղամսից չանջատվող, մուգ կապտամանուշակագույն՝ ծածկված երկնագույն խիտ մուկ փառով: Ենթամաշկային կետերը բազմաթիվ են. պտղամիսը դեղնականաչ է՝ նարնջագույն երանգով, պինդ, մսոտ, միջակ հյութեղ, քաղցր, բուրավետ, համեղ: Աղանդերային սորտ է. օգտագործվում է նաև սև սալորաչրի (չեռնոսլիվ), դոնդոդների (ժելենների) և պովիդլոնների պատրաստման համար:
Հունգարա- սալոր տնային կամ սովորական	Օգոստոսի երրորդ տասնօրյակից մինչև սեպտեմբերի առաջին կեսը:	15 տարեկան ծառերը տալիս են 60- 70կգ բերք: Լավ է աճում խոնավությամբ ապահովված վայրերում: Պտուղները կարող են	Բավական ին խոշոր ծառեր են՝ արագ աճող լայն բրգաձև սաղարթով, խիտ ճյուղավորվա ծությամբ. պտղաբերման են անցնում	Պտուղները միջակ մեծության են՝ 30-35գ, օվալաձև, ձգված և դուրս պրծած որովայնակարով: Մաշկը սև կապտավուն, ծիրանամանուշակագույն

<p>(<u>Վենգերկա դոմաշնյայա կամ օբիկնովեննայա</u>), ասիական:</p>		<p>պահվել 15- 20օր: Լավ է տանում երիտասարդացնող էտը՝ ապրելով 50-60 տարի, իսկ առանց այդ գործողության երկարակեցությունը 25-30 տարի է: Փոխադրունակ է:</p>	<p>5- 6-րդ տարուց, բարձր բերքատու են</p>	<p>երանգով, ժանգանման կետերով՝ ծածկված թխակապույտ փառով: Պտղամիսը կանաչադարչնագույն է, թեթև թելանման, հյութալի, թթվաշաքարոտ, բուրավետ, լավ համով: Կորիզը պտղամսից լավ է անջատվում, ձգված է, ձվաձև, տափակավուն, սրածայր: Աղանդերային սորտ է, օգտագործվում է նաև սև սալորաչրի (չեռնոսլիվ), մուրաբաների և կոմպոտների պատրաստման համար:</p>
---	--	--	--	---

Խոշոր՝ 30 գ.-ից բարձ

Միջին մեծության՝ 20-30գ.

Մանր՝ 5-10



ՀՀ-ում աճող բալենու որոշ սորտերի բնութագիրը

Աղյուսակ 2դ

<i>Մորտիանվանու</i>	<i>Հասունացման</i>	<i>Բերքատվությունը, պտուղների</i>	<i>Աճման, պտղաբերման բնույթը</i>	<i>Պտղիմեծությունը, ձևը, գունավորումը,</i>
---------------------	--------------------	-----------------------------------	----------------------------------	--

<i>մրնծագումը</i>	<i>Ժամկետը և ցրտադիմացկունությունը</i>	<i>պահունակությունը և փոխադրունակությունը</i>		<i>համը</i>
1	2	3	4	5
<u>Ժուկովսկայաս</u> լեկցիայի ճանապարհով տացված սորտ է:	Միջավաղահաս է, պտուղները հասունանում են հունիսի 15-25-ը: Ցրտադիմացկուն է և բերքատու, կայուն հիվանդություններին ատմամբ: Վաղ է մտնում պտղաբերման շրջան:	10 տարեկան ծառերը տալիս են 28-30, իսկ ավելի մեծահասակները՝ 40 կգ բերք: Փոխադրունակությունը լավ է.	Միջակ աճեցողությամբ ծառեր են՝ կլորավուն, գնդաձև սաղարթով, միջակ խտությամբ, բերքի են անցնում 3-4-րդ տարուց:	Պտուղները խոշոր են՝ մինչև 5,2գ, երկար-սրտաձև. Մաշկը մուգ բալագույն է, փայլուն, բարակ, պտղամիսը նուրբ է, մուգ կարմիր, հյութալի, թթվաշաքաղցր, լավ համով: Պտղակոթը երկար է, բարակ, կորիզը խոշոր, լայն ձվաձև, ներկված, պտղամսից լավ անջատվող: Խոշորապտուղ է, պիտանի է թե՛ թարմ օգտագործման, թե՛ վերամշակման համար:
<u>Պողբելսկայա</u> <u>արևմտաեվրոպ</u> <u>ական</u>	Վաղահաս է, հասունանում է հունիսի 12-20-ը: Վաղ և ամենամյա պտղաբերող: Չորության նկատմամբ ծառերի դիմացկունությունն բավարար է:	20 տարեկան ծառերը տալիս են մինչև 64 կգ բերք: Փոխադրունակ է:	Ուժեղ աճող ծառեր են՝ կլորավուն խիտ սաղարթով, կախված ճյուղերով, բերքի են անցնում 4-5-րդ տարուց:	Պտուղները խոշոր են՝ մինչև 6գ, կլորավուն, տափակավուն-կլոր, հարթ մակերեսով, մաշկը շատ մուգ կարմիր է, փայլուն: Պտղամիսը մուգ կարմիր է, թույլ բուրմունքով, հյութալի, քաղցրաթթվաձև՝ օժտված լավ համային հատկանիշներով: Պտղահյութը ներկված է: Պտղակոթը հաստ է, միջակ երկարությամբ, կորիզը խոշոր, կլոր, ներկված, պտղամսից լավ անջատվող: Խոշորապտուղ է, բարձրորակ: Բացի թարմ օգտագործումից, արժեքավոր է մուրաբաների, կոմպոտների, հյութերի պատրաստման համար:
<u>Սիսիանի</u>	Վաղամիջահաս է՝ հունիսի վերջին տասնօրյակից մինչև	4-5 տարեկան ծառերը տալիս են 25-30, առանձին դեպքերում՝ 50-60կգ բերք:	Ուժեղ աճող խոշոր ծառեր են՝ բրգաձև սաղարթով, բարակ, կախ ընկած ճյուղերով. Պտղաբերում են	Պտուղները բավական խոշոր են՝ մինչև 8գ, տափակ կլորավուն. Մաշկը բարակ է, բայց պինդ, մուգ կարմիր, հասունացած

	<p>հուլիսի վերջը:</p>		<p>միամյա ճյուղերի վրա. Կարող է աճել ծովի մակերևույթից մինչև 1750մ բարձրության վրա: Ունի արմատային մացառներով բազմանալու հատկություն, որը և դրա բազմացման հիմնական եղանակն է:</p>	<p>վիճակում համարյա սև. Պտղամիսը բավական պինդ է, կորիզից չանջատվող, մուգ կարմիր, հյութալի, քաղցրաթթվաշ, թեթև տտիպությամբ, բուրավետ և լավորակ, կորիզը փոքր է, կլոր, պտղակոթը 2- 2.5 անգամ երկար է պտղից: Օգտագործվում է թարմ սպառման և վերամշակման (կոմպոտներ, մուրաբաներ) համար:</p>
--	-----------------------	--	---	--

Խոշոր՝ 6 գ.-ից բարձ

Միջին մեծության՝ 3-5գ.

Մանր՝ 2-3գ.



ՀՀ-ում աճող կեռասենու որոշատրտերի բնութագիրը

Աղյուսակ 2ե

<i>Մորտիանվանու մրնծագումը</i>	<i>Հասունացման Ժամկետը և ցրտադիմացկունությունը</i>	<i>Բերքատվությունը, պտուղների պահունակությունը և փոխադրունակությունը</i>	<i>Աճման, պտղաբերման բնույթը</i>	<i>Պտղիմեծությունը, ձևը, գունավորումընհամը</i>
1	2	3	4	5
<u>Դրոզանադեղին</u> արևմտա կրոպական	Ուշահաս է՝ հունիսի 25-ից հուլիսի 15-ը:	1 ծառից ստացվում է 33-ից մինչև 74-130 կգ բերք. 10 տարեկան ծառերի բերքատվությունը տատանվում է 18-20կգ-ի սահմաններում, փոխադրունակ է:	Խոշոր ծառեր են՝ ուժեղաճ կամ միջակ աճեցողությամբ, լայն կլորավուն սաղարթով, խիտ ճյուղավորված, հզոր կմախքային ճյուղերով. Վաղ են անցնում պտղաբերման շրջան՝ 5-րդ տարուց և աչքի են ընկնում ամենամյա առատ ու կանոնավոր պտղաբերությամբ:	Պտուղները խոշոր են՝ 5-9 գ., կլոր- սրտաձև, դեղին, փայլուն, հաստ մաշկով: Պտղամիսը դեղնավուն է, ամուր, մսալի, հյութեղ, քաղցր, թույլ թթվությամբ և դուրեկան համով, կորիզը խոշոր է, ուռուցիկ, լայն ձվաձև, պտղամսից վատ անջատվող: Բացի թարմ օգտագործումից (4.5 բալ) պիտանի է կոմպոտների (4.75 բալ) և մուրաբաների (5.0 բալ) պատրաստման համար, փոխադրունակ է:
<u>Նապոլեոնսև</u> Եվրոպական	Հունիսի 25-ից հուլիսի 15-ը: Ձմեռադիմացկունությո ւնը, հիվանդությունների նկատմամբ դիմացկունությունը բարձր են, բայց ուշ են անցնում արդյունաբերականպտ ղաբերության շրջան:	15-20 տարուց սկսում են առատ պտղաբերել՝ 1 ծառից տալով մինչև 130 կգ բերք:	Ուժեղ աճող ծառեր են՝ ձգված սաղարթով և թույլ ճյուղավորությամբ:	Պտուղները միջակ մեծության են և խոշոր՝ 5-6գ., սրտաձև, թույլ կողավոր, գազաթի փոքրիկ կետով, մաշկը թույլ փայլուն է, մուգ բալագույն, համարյա սև, պինդ, պտղամսին ուժեղ կպած. Պտղամիսը մուգ բալագույն է, պինդ կրճկային, քաղցր, թույլ թթվաշ, թեթևակի տոփպությամբ և թթվաշությամբ, մուգ ներկված հյութով և լավ համով, կորիզը ձվաձև է, ոչ խոշոր: Պտուղները բարձրորակ են: Պիտանի է թարմ օգտագործման և վերամշակման համար, դրանից պատրաստված կոմպոտները

				ստացել են 5 բալլ:
<u>Նապոլեոն վարդապույն</u> գերմանական	Հուլիսի սկզբին: Կեռասենու լավագույն սորտերից է: Երկարակյաց է և կանոնավոր պտղաբերությամբ:	17 տարեկան ծառերից հավաքվում է մինչև 120կգ պտուղ:	Բրգաձև սաղարթով և լավ աճման ուժով ծառեր են, պտղաբերում են 3-4-րդ տարուց,	Պտուղները արտակարգ գեղեցիկ են, խոշոր, սրտաձև: Կեղևը (էկզոկարպը) հարթ է, բարակ, բայց ամուր, պինդ և փայլուն՝ բաց դեղին, վառ կարմրագույն շառագույնով: Պտղամիսը սպիտակ է, հյութալի, իսկ հյութը թափանցիկ և շատ թույլ ներկված: Պտղակոթը Կարճ է և բավական հաստ: Կորիզը փոքր է, երկար, սրտաձև, պտղամսից լավ անջատվող: Հրաշալի հումք է պահածոյացման համար, օգտագործվում է նաև թարմ վիճակում:
<u>Գեներալսկայա</u> Մեյեկցիոն սորտ է:	Մահալերյան բալենու պատվաստակալի դեպքում շառերը ուշ են պտղաբերում, իսկ կեռասի պատվաստակալի վրա սորտը պտղաբերում է 3-4-րդ տարուց: Ցրտադիմացկուն է:	8-10 տարեկան ծառերը տալիս են մինչև 25կգ բերք:	Ծառը ուժեղաճ է, ցածր բնով: Սորտը պիտանի է թարմ սպառման համար:	Պտուղները շատ պոշոր են մինչև 10գր երկար-կոնաձև, կլորավուն, կոթքերից թեթևակի սեղմված: Մաշկը փայլուն է, հաստ, պինդ: Հիմնական գույնը՝ դեղնասերուցքագույն է, իսկ ծածկողը՝ վարդագույն-կարմիր: Պտղամիսը բաց սերուցքագույն է, մուր, հյութեղ, քաղցր՝ դուրեկան թթվաշությամբ: Պտուղները ունեն գրավիչ արտաքին տեսք:

Խոշոր՝ 7 գ.-ից բարձ

Միջին մեծության՝ 5-7գ.

Մանր՝ 3-4գ.



ՀՀ-ում տարածված ընկուզենու որոշ ձևերի համառոտ բնութագիրը

<i>Ձևի անվանումը, ծագումը</i>	<i>Հասունացման ժամկետը և ցրտադիմացկունությունը</i>	<i>Բերքատվությունը Պտուղների պահունակությունը և փոխադրունակությունը</i>	<i>Աճման, պտղաբերման բնույթը</i>	<i>Պտղի մեծությունը, գույնը, համը</i>
<u>Աշտարակի Տեղական հզորած ձև</u>	Ծաղկման նժամկետը համընկնում է առատ անձրևների ժամանակահատվածին, որի արդյունքում հաճախ նվազում է բերքատվությունը: Բերքը հասունանում է սպտեմբերի 1-ի տասնօրյակում: Դիմանում է-26 աստիճան ցրտին	10-15 տարեկան ծառերը 1 ծառից տալիս են 100-200 կգ բերք, 1 հա-ից ստացվում է 15-20 տոննա բերք:	Ծառերը ապրում են 200 և ավելի տարիներ, հզորած են, լավ արտահայտված հարկայնությամբ: Ծառերը հասնում են 20-25մ բարձրության:	Պտղի միջին քաշը 5-10գ է: Պտղապատ-յանը կնճռոտ է: Պտղի ձևը կանոնավոր է, ձվաձև: Կեղևը փափուկ է, միջուկը կեղևից հեշտ է անջատվում: Միջուկը խոշոր է՝ 3-7գ քաշով, կտրվածքում սպիտակ, քաղցր, հաճելի համով, 60% ճարպի պարունակությամբ: Միջուկը աչքի է ընկնում սպրտակուցների պարունակությամբ, յոդի պարունակությամբ և E վիտամինի պարունակությամբ:
<u>Չանդլեր</u>	Այս ձևերը ունեն համեմատաբար երկարատև ձմեռային հանգստի շրջան, ցրտադիմացկունությամբ զիջում են տեղական ձևերին, Պտուղները հասունանում են սեպտեմբերի 2-րդ տասնօրյակում:	Բերքատվության են անցնում տնկումից 2-րդ տարուց: Մեկ ծառից տալիս են մինչև 60 կգ բերք,իսկ մեկ հա-ից ստացվում է մինչև 30 տոննա բերք:	Ցածր աճ կիսաթփուկային ձև Ծառերը ապրում են 60-80 տարի ուժեղած են, բարձրությունը հասնում է 4-6 մետրի: Սորտը աչքի է ընկնում միջուկի բարձր արժանիքներով:	Պտուղը կշռում է մինչև 17գ: Ծառերը ունեն ողկուսաձև կամ հասկային պտղաբերում:Պտղապատյանը բարակ է իսկ մակերեսից կանաչ: Պտուղները կլոր կամ կլորովալաձև են: Կեղևը բավական բարակ է, փափուկ: Կեղևը պտուղների պահպանման ժամանակ չի քայքայվում: Միջուկը կտրվածքում սպիտակ է, քաղցր, հաճելի համով, 53% յուղի պարունակությամբ:



Նշենու ՀՀ-ում շրջանացված որոշ սորտերի համառոտ բնութագիրը

Աղյուսակ 4ա

<i>Մորտի անվանումը, ծագումը</i>	<i>Հասունացման ժամկետը և ցրտադիմացկունությունը</i>	<i>Բերքատվությունը Պտուղների պահունակությունը և փոխադրունակությունը</i>	<i>Աճման, պտղաբերման բնույթը</i>	<i>Պտղի մեծությունը, գույնը, համը</i>
<p><u>Դեսերտնի</u> Նիկիտսկի պետական բուսաբանական այգու սելեկցիոն սորտ է:</p>	<p>Մորտը գարնանային ցրտահարությունների նկատմամբ դիմացկուն է: Բերքը հասունանում է սպտեմբերի 1-ի տասնօրյակում</p>	<p>10-12 տարեկան ծառերի 1 հա-ից ստացվում է 8,7ց բերք (1հա-ի վրա 238 ծառ հաշվով)</p>	<p>Ծառերը չափավոր աճ ունեն կլորավուն, կախվող, բաց պսակով:</p>	<p>Պտղի միջին քաշը 3գ է: Պտղապատյանը կնճռոտ և ալիքավոր է: Բաց դարչնագույն, թույլ արտահայտված խորդուբորդությամբ: 1կգ-ում կա 330 պտուղ: Պտղի ձևը կանոնավոր է, ձվաձև, ուռուցիկ կողային թևերով: Կեղևը փափուկ է, ծածկված խոր կետերով, որոնք պտղի հիմքում անհետանում են: Միջուկը խոշոր է՝ 1.57գ քաշով, մուգ դարչնագույն, կարմրավուն երանգով, կտրվածքում սպիտակ, քաղցր, հաճելի համով, 54.3% ճարպի պարունակությամբ:</p>
<p><u>Նիկիտսկի</u> Նիկիտսկի պետական բուսաբանական այգու սելեկցիոն սորտ է:</p>	<p>Այս սորտերը ունեն երկարատև ձմեռային հանգստի շրջան, բավական ցրտադիմացկուն է, ուշ ծաղկող: Պտուղները հասունանում են սեպտեմբերի 2-րդ տասնօրյակում:</p>	<p>10-12 տարեկան ծառերի մեկ հա-ից ստացվում է 9.2ց բերք:</p>	<p>Ծառերը ուժեղաճ են, բարձր: Մորտը աչքի է ընկնում փափուկ կեղևով և միջուկի բարձր արժանիքներով:</p>	<p>Պտուղը կշռում է 2.17գ: Պտղապատյանը բարակ է, չոր, իսկ մակերեսից կանաչ, զգալիորեն խավապատ: 1կգ-ում կա 474 պտուղ, պտուղները թրածն են: Կեղևը բավական բարակ է, փափուկ: Կեղևը պտուղների պահպանման ժամանակ չի քայքայվում: Միջուկը մեկն է, հազվադեպ երկու 0.92 գ քաշով, մուգ դարչնագույն կտրվածքում սպիտակ, քաղցր, հաճելի համով, 53% յուղի պարունակությամբ:</p>
<p><u>Նոնպարել</u> Այս սորտը ստեղծվել է ԱՄՆ-ում, նշենու</p>	<p>Մորտը չափավոր ցրտադիմացկուն է, ուշ ծաղկող:</p>	<p>Մորտը հասունանում է սեպտեմբերի 1-ին տասնօրյակում, միջին բերքատվությամբ է, 10-12 տարեկան ծառերից ստացվում է 7ց բերք 1հա-ի հաշվով:</p>	<p>Ծառը միջակ աճեցողությամբ է: Մորտի արժանիքը այն է, որ թղթանման կեղև ունի և արժեքավոր պտղամիջուկ:</p>	<p>Պտուղներն ըստ մեծության միատեսակ չեն: Կշռում են 1.6գ: Պտղապատյանը մակերեսից մոխրավուն է, թավշյա խավով պատված, չորանալիս պտղից վատ է անջատվում: Պտուղը մուգ դարչնագույն է, խիստ</p>

արդյունաբերական տնկարկներում :				անհարթ: 1կգ-ում կա 596 պտուղ: Նեղ թրածնէ, տափակ, միայն 2 հատիկի առկայության դեպքում պտուղները ուռուցիկ լինելու պատճառով փքված են: Կեղևը թղթանման է, փափուկ փշրվող, մակերեսը պատված է խոշոր ու մանր բազմազան կետանման փոսիկներով: Միջուկի քաշը 0.95գ է, մեկ կամ 2 հատ խոշոր, դարչնագույն կարմրավուն երանգով, կտրվածքում սպիտակ, քաղցր, հաճելի համով 53% յուղի պարունակությամբ:
--------------------------------	--	--	--	---

Խոշոր՝ 7 գ.-ից բարձ

Միջին մեծության՝ 3-5գ.

Մանր՝ 2-3գ



ՀՀ-ում շրջանացված էլակի որոշ սորտերի համառոտ բնութագիրը

Աղյուսակ 5ա

<i>Սորտի անվանումը, ծագումը</i>	<i>Հասունացման ժամկետը և ցրտադիմացկունությունը</i>	<i>Բերքատվությունը Պտուղների պահունակությունը և փոխադրունակությունը</i>	<i>Աճման, պտղաբերման բնույթը</i>	<i>Պտղի մեծությունը, գույնը, համը</i>
<p><u>Պրուֆիկ</u> Անգլիական ծագմամբ սորտ է: Շրջանացված է Արարատյան դաշտում և Շիրակում</p>	<p>Պտուղները հասունանում են ցածրադիր գոտում հունիսի սկզբներին, իսկ լեռնային շրջաններում՝ հուլիսի առաջին տասնօրյակում:</p>	<p>Բերքատվությունը մեկ թփից մինչև 300գ է, մեկ հեկտարից մինչև 6-7 տ: Աճում է բոլոր տիպի հողերում, դիմացկուն է հիվանդությունների հանդեպ:</p>	<p>Թփերի բարձրությունը հասնում է մինչև 50սմ՝ խիտ դասավորված խոշոր տերևներով: Օաղիկները միասեռ են, պահանջում են խաչաձև փոշոտում, լավագույն փոշոտիչն է Ռոշչինսկայա սորտը:</p>	<p>Պտուղները խոշոր են կամ միջակ մեծության՝ մինչև 8գ, իսկ առաջին պտուղները մինչև 20գ են: Լայն կոնաձև, կողավոր, մուգ վարդագույն և փայլուն: Պտղամիսը պինդ է, թթվաշաքարոցը համով, լավ բուրմունքով:</p>
<p><u>Ջենգա-</u> Ջենգա գերմանական սորտ է</p>	<p>Միջահաս և ուշահաս սորտ է:</p>	<p>Հեկտարից ստացվում է 6-7 տոննա բերք:</p>		<p>Պտուղները սեպաձև կամ կլոր կոնաձև են, մուգ կարմիր գունավորմամբ փայլուն: Մերմերը պտղամսի մեջ ներս սեղմված են: Առաջին պտուղները կշռում են մինչև 25 գրամ, միջին քաշն է մինչև 14 գրամ:</p>
<p><u>Սպիտակ անանայան</u> Ամերիկյան սորտ է:</p>	<p>Միջահասակ, հիվանդությունների նկատմամբ իմուն է և ցրտադիմացկուն</p>	<p>Միջակ բերքատու սորտ է:</p>		<p>Պտուղները կիսակլոր վզիկով են, թույլ վարդագույն կամ սպիտակ: Պտղամիսը ամուր է, բարձր համային հատկանիշներով: Մերմերը կարմիր են, մակերեսային:</p>
<p><u>Հոնիոյ</u></p>	<p>Վաղահաս ու ցրտադիմացկուն սորտ է: Հիվանդությունների նկատմամբ դիմացկուն չէ:</p>	<p>Թարմ վիճակում փոխադրունակ են: Թեթև հողերում մշակության դեպքում պտուղները բավականին համեղ են:</p>	<p>Բերքատվությունը 1 հեկտարից մինչև 15 տ է:</p>	<p>Խոշորապտուղ, գեղեցիկ, կարմիր ամուր պտուղներով սորտ է: Պտղի միջին քաշը 10գ է:</p>

<p><u>Զեվել</u> Լայնորեն տարածված է և ամենահարմարված սորտերից է</p>	<p>Դիմացկուն է հիվանդությունների նկատմամբ</p>	<p>Օգտագործվում է թարմ վիճակում և ունի բարձր փոխադրունակություն</p>	<p>1 հեկտարից բերքատվությունը 18տ է կազմում:</p>	<p>Պտուղները խոշոր են, ամուր, լավ զունավորված և քաղցրահամ: Պտղի միջին քաշը 18.6գ է:</p>
<p>ԱԼԲԻՈՆ Ծագումը՝ ԱՄՆ, Կալիֆորնիա:</p>	<p>Բավական ամուր է և փոխադրմանը դիմացկուն:</p>		<p>Ունի գերազանց համային հատկանիշներ: Բերքատվությունը բարձր է:</p>	<p>Պտուղը սկզբում երկարավուն– կոնաձև է, շատ համաչափ, հասունացման վերջում դառնում է ավելի լայն: Ունի համեմատաբար մուգ կարմիր գույն և փայլուն մակերես: Չափը շատ խոշոր է:</p>

Խոշոր՝ 18 գ.-ից բարձ
Միջին մեծության՝ 10-15գ.
Մանր՝ 2-10գ



ՀՀ-ում շրջայնացված հաղարջենու որոշ սորտերի համառոտ բնութագիրը

Աղյուսակ 5բ

<i>Սորտի անվանումը, ծագումը</i>	<i>Հասունացման ժամկետը և ցրտադիմացկունությունը</i>	<i>Բերքատվությունը Պտուղների պահունակությունը և փոխադրունակությունը</i>	<i>Աճման, պտղաբերման բնույթը</i>	<i>Պտղի մեծությունը, գույնը, համր</i>
<u>Գուլիաֆ</u>	Պտուղները հասունանում են հուլիսի սկզբներից	Սորտը աչքի է ընկնում բարձր բերքատվությամբ և պտուղների որակով: Բերքատվությունը մեկ թփիցմինչև 4կգ է:	1,5մ բարձրությամբ հովանոցաձև տարածվող ճյուղերով բազմամյա թուփ է: Թփերը պտղաբերման մեջ են մտնում տնկման 2-րդ տարուց:	Պտուղները կլորավուն են, սև, մինչև 1,5գ քաշով: Պտղամիսը կանաչավուն է, նուրբ բուրմունքով, թթվաշաքարոցը համով:
<u>Լիա Բերքատու</u>	Պտուղները հասունանում են հունիսի վերջերից հուլիսի սկզբին:	Այս սորտը աչքի է ընկնում ամենամյա բարձր բերքատվությամբ: Մեկ թփից բերքատվությունը կազմում էմինչև 3կգ:	Պտուղները օգտագործվում են հիմնականում վերամշակված վիճակում:	Պտուղները կլորավուն են 2գ քաշով, սև, փայլուն գույնի են, ողկյուղը միջակ մեծության է: Պտղամիսը թթվաշ է քաղցր դուրեկան բույրով:
<u>Կրանդալ</u> Հյուսիս-ամերիկյան սորտ է	Պտուղները հասնում են հուլիսի կեսերից մինչև հուլիսի վերջերը	Բերքատվությունը 1 թփիցմինչև 6կգ է և ավելի : Այս սորտը մեծ նշանակություն ունի արտադրական տնկարկներ հիմնելիս և դեկորատիվ նպատակներով:	1,5-2մ բարձրությամբ թփեր են: Աճում են ուժեղ և խիտ տերևապատվածությամբ	Պտուղները խոշոր են, 2գ քաշով, կլորավուն, սև կամ կանաչագույն, աչքի են ընկնում շաքարների, թթուների, C վիտամինի և բուրավետ նյութի պարունակությամբ
<u>Կովկասյան</u> ՀՀ-ում շատ տարածված սորտ է:	Առաջին բերքը տալիս է 3-4-րդ տարում	Բերքատվությունըմեկ թփից մինչև 2 կգ է:	Շիվերը բաց շագանակագույն են	Պտուղները կլորավուն են, մանր 0,8գ կշռով, երկար ողկյուղներով, փայլուն, կարմիր գույնի հատիկներով, քաղցրաթթվաշ համով և պտուղները հասունանալիս չեն թափվում:

Խոշոր՝ 2 գ.-ից բարձր
Միջին



մեծության՝ 1-1.5գ.

Մանր՝ 0.5-1գ

ՀՀ-ում շրջայնացված կոկոռչենու որոշ սորտերի համառոտ բնութագիրը

Աղյուսակ 5գ

<u>Խառուտոն</u>	Պտուղները հասունանում են հուլիսի երկրորդ տասնօրյակում կից մինչև օգոստոսի սկիզբները	1 թփից բերքավորությունը մինչև 5 կգ է	Այս սորտը աչքի է ընկնում բարձր չորադիմացկունությամբ: Թուփը հզոր է, շատ ճյուղավորված:	Պտուղները կշռում են 1,5գ, վարդագույն, կարմիր գույնի են, թթվաշաքարոցը թարմացնող համով:
<u>Կանազ շշաձև</u>	Պտուղները հասունանում են հուլիսի վերջին, օգտագործվում են թարմ և վերամշակված վիճակում	Բերքավորությունը մեկ թփից մինչև 6 կգ է:	Պտուղները օգտագործվում են թարմ և վերամշակված վիճակում:	Պտուղները խոշոր են երկար-օվալաձև, կանաչ կամ մուգ կանաչ գույնի, մաշկը նուրբ է: Պտղամիսը կանաչավուն է, հյութալի, թթվաշաքարոցը համով:
<u>Վարշավայի</u> Այս սորտը հայտնի է նաև Սպիտակ Ֆինիկ անունով	Պտուղները հասունանում են հուլիսի կեսերից մինչև հուլիսի վերջ	Սորտը աչքի է ընկնում բարձր բերքատվությամբ 1 թփից՝ մինչև 7 կգ	-	Պտուղները խոշոր են գերազանց համով: Կարմիր են, երկար օվալաձև կամ կլորօվալաձև, մաշկը հաստ է, պտղամիսը վարդագույն, հյութալի, թթվաշաքարոցը համով:
<u>Բլաք Վելվեթ</u>	Ցրտադիմացկուն է, հիվանդությունների նկատմամբ դիմացկուն	Առատ պտղաբերում է անգամ ամենացուրտ վայրում:	-	Կոկոռշենու այս նոր սորտը տալիս է խոշոր, քաղցր, մուգ կարմիր, համեղ պտուղներ

Խոշոր՝ 2 գ.-ից բարձր
Միջին մեծության՝ 1-1.5գ.

Մանր՝ 0.8-1գ.



ՀՀ-ում տարածված մորենու և մոշենու որոշ սորտերի համառոտ բնութագիրը

Աղյուսակ 5գ

<i>Սորտի անվանումը, ծագումը</i>	<i>Հասունացման ժամկետը և ցրտադիմացկունությունը</i>	<i>Բերքատվությունը Պտուղների պահունակությունը և փոխադրունակությունը</i>	<i>Աճման, պտղաբերման բնույթը</i>	<i>Պտղի մեծությունը, գույնը, համը</i>
<u>Անգլիական</u> Հայաստանում տարածված հնագույն սորտերից է	Պտուղները հասունանում են հուլիսի 2-րդ տասնօրյակում:	Սորտը աչքի է ընկնում բարձր բերքատվությամբ: Վեգետացիայի ընթացքում կարող է բերք տալ երկրորդ անգամ: Բերքատվությունը մեկ թփից մինչև 2կգ է:	Պտուղները օգտագործվում են թարմ և վերամշակված վիճակում:	Պտուղները շատ խոշոր են, մորենուն հատուկ կարմիր գույնի, անփայլ, երկարավուն և գեղեցիկ: Պտղամիսը հյութալի է, թթվաշաքարոտ համով:
<u>Մալբորո</u> Հյուսիսամերիկյան ծագմամբ սորտ է	Պտուղները հասնում են հուլիսի սկզբից	Աչքի է ընկնում բարձր բերքատվությամբ և տարբեր կլիմայական պայմաններում լավ հարմարվողականությամբ: Ունի բարձր փոխադրունակություն: Բերքատվությունը մեկ թփից մինչև 2կգ է:	Տիպիկ թուփ է ճյուղերի բարձրությունը 1-1,5մ է:	Պտուղները խոշոր են օվալաձև, հավասարաչափ, բաց կարմիր գույնի: Պտղամիսը քաղցր թթվաշ համով:
<u>Աննա (դեղին մորի)</u>	Միջառաջահաս սորտ է	Սորտը դիմացկուն է արմատային փտման նկատմամբ	Միջինից խոշոր թփեր են, տնկվում են խիտ: Մացառ առաջացումը թույլ է արտահայտված:	Պտուղը խոշոր, կոնաձև, քաղցրահամ և դեղին գույնի:
<u>Թրիփլ քրոուն (անփուշ մոշ)</u>	Վաղահաս է: Հասունանում է հունիսի վերջին:	Բարձր բերքատու է	Կիսականգուն թփով սորտ է: Օգտագործվում է թարմ և պահածոյացման համար:	Պտուղները խոշոր են հյութալի, շատ քաղցր:

Խոշոր՝ 2 գ. -ից բարձր
Միջին մեծության՝ 1-1.5գ.
Մանր՝ 0.8-1գ.



ՀՀ-ում աճող թզենու որոշ սորտերի համառոտ բնութագիրը

Աղյուսակ 6ա

<p><i>Սորտի անվանումը, ծագումը, տարածվածությունը</i></p>	<p><i>Հասունացման ժամկետը և ցրտադիմացկունությունը</i></p>	<p><i>Բերքատվությունը, Պտուղների պահունակությունը և փոխադրունակությունը</i></p>	<p><i>Աճման, պտղաբերման բնույթը</i></p>	<p><i>Պտղի մեծությունը, գույնը, համը</i></p>
<p><u>Դավառակի</u> I-ին անգամ Հայաստան է բերվել 1949թ-ին Նիկիտսկիպետական բուսաբանական այգուց</p>	<p>I-ին պտուղները հասունանում են հուլիսի կեսին, II-րդ բերքի պտուղները հասունանում են օգոստոսի II –րդ կեսից մինչև սեպտեմբերի վերջ:</p>	<p>7 տարեկան հասակում տալիս են 35 կգ պտուղ: Հիմնական բերքի պտուղները նորմալ հասունանում են մինչև աշնան ցուրտ շրջանը սկսվելը, համեմատաբար լավ են թառամում ծառի վրա և չեն ճաքճքվում այգու և հողի գերխոնավության դեպքում:</p>	<p>Պտղաբերում է 2 անգամ: Փոշոտումը կատարվում է բլաստաֆագ կոչվող միջատի օգնությամբ: Ծառերը բավական բերքատու են: Ծառերը թույլաճ են:</p>	<p>Առաջին բերքի պտուղները շատ մեծ են, մինչև 100 գ. քաշով: Պտուղները երկարավուն են, հիմքում աստիճանաբար նեղացող, տափակ զագաթով: Մաշկը հավասարաչափ կանաչ է, բավականին հաստ, միջին խտության, արծաթագույն, մոմափառով, կարճ և նուրբ խավապատ: Պտղամիսը մուգ մոխրագույն է, միջին հյութալիությամբ, նուրբ, հալվող, քաղցր, հաճելի թթվությամբ և համով: II-րդ բերքի պտուղները մինչև 80 գ են: Սրանց մաշկը՝ մոխրականաչավուն է: Պտղամիսը մուգ մորեգույն է, միջին հյութալիության նուրբ, հալվող, քաղցր, հաճելի թթվությամբ և համով:</p>
<p><u>Կադրոսա</u> Բերվել է 1949թ-ին Նիկիտսկիպետական բուսաբանական այգուց</p>	<p>I –ին բերքի պտուղները հասունանում են հուլիսին. II-րդ բերքի պտուղները հասունանում են օգոստոսի կեսից մինչև հոկտեմբերի երկրորդ կեսը:</p>	<p>Այս սորտը տալիս է երկու բերք: 7-8 տարեկան ծառը տալիս է մինչև 45 կգ պտուղ: Այս սորտը բարձր և կանոնավոր բերքատվություն ունի: Հիմնականում պտուղները համաչափ են: Պտղաբերում են մեկ տարեկան ճյուղի և ընթացիկ տարվա շիվերի վրա:</p>	<p>Ծառը միջին աճեցողության է: Սովորաբար պտղաբերում է 2-3 տարում: Արդյունաբերական բերքը տալիս են 5-6 տարեկանում: Ծառի միջին տարիքը 60-70 տարի է:</p>	<p>I –ին բերքի պտուղները խոշոր են՝ մինչև 80 գ քաշով: Պտղամաշկը դեղնականաչ է, փայլուն, միջին հաստության, խիտ, ճկուն, կոշտ խավապատ, պտղի հիմքի մոտ շատ թույլ մոմափառով: Պտղամիսը բաց վարդագույն է, միջին հյութալի, չափավոր քաղցր, թույլ բուրմունքով, բավարար հաճելի համով: II-րդ բերքի պտուղները միջին կամ միջինից փոքր ինչ մեծ են՝ (մինչև 50 գ): II-րդ բերքի մաշկը բարակ է, բավական խիտ, կանաչադեղին: Պտղամիսը վարդագույն է, նուրբ, քիչ քանակությամբ սերմերով, փոշոտված պտուղները մուգ</p>

				կարմիր, ժելեանման, կապտավուն, զգալի քանակությամբ սերմերով, ոչ շատ թթու, հաճելի բուրմունքով:
<p><u>Չապլա</u> 1949թ. Հայաստան է բերվել Նիկիտսկիպետ ական բուսաբանա- կան այգուց</p>	<p>I-ին բերքի պտուղները հասունանում են հուլիսի առաջին կեսին: II-րդ բերքի պտուղները հասունանում են օգոստոսի II-րդ տասնօրյակից մինչև հոկտեմբերի կեսերը, միջին չափի են:</p>	<p>Հիմնական բերքի պտուղները ցուրտ աշնանը ենթակա են թթվելու: 7 տարեկան ծառից հավաքում են շուրջ 45 կգ պտուղ: Պտղի սահմանում դիտվում է ծաղկակալի և պտղամսի անհավասարաչափ հասունացում:</p>	<p>Փոշոտում չեն պահանջում:</p>	<p>I –ին բերքի պտուղները խոշոր են, մինչև 200 գ.քաշով, երկարավուն տանձաձև են, հիմքի մոտ ձգված, ասիմետրիկ, աչքը բաց կամ կիսաբաց : Մաշկը կանաչադեղին է հիմքի մոտ, պտղի մակերեսի գրեթե 75%-ը բաց դարչնագույն է, կարմրավուն երանգով թույլ խավապատ, փայլուն: Պտղամիսը բաց կամ մուգ վարդագույն է, հատիկավոր, հյութալի, բավարար քաղցր, հաճելի համով: II-րդ բերքի պտուղները կշռում են մինչև 70 գ, ասիմետրիկ են:</p>

Խոշոր՝ 100 գ.-ից բարձ

Միջին մեծության՝ 70-100գ.

Մանր՝ 30-70գ.



ՀՀ-ում աճող նոնենու որոշ սորտերի համառոտ բնութագիրը

Աղյուսակ 6բ

<i>Սորտի անվանումը, ծագումը</i>	<i>Հասունացման ժամկետը և ցրտադիմացկունությունը</i>	<i>Բերքատվությունը, Պտուղների պահունակությունը և փոխադրունակությունը</i>	<i>Աճման, պտղաբերման բնույթը</i>	<i>Պտղի մեծությունը, գույնը, համր</i>
<p><u>Գյուլըշա վարդագույն կամ Գյուլըշա հայկական</u> Հանդիպում է Հայաստանի մերձարևադարձային բոլոր շրջաններում:</p>	<p>Ծառերը պտղաբերման են անցնում տնկման 3-րդ տարուց, լրիվ պտղաբերում են 6-7-րդ տարում: Սորտը ունի միջին ցրտադիմացկունություն: Հասունանում են հոկտեմբերի կեսին :</p>	<p>Միջին բերքատվությունը մեկ թփից 21 կգ է: Պտուղները պահվում են 2-3 ամիս: Ունիվերսալ օգտագործման համար է:</p>	<p>Թփերը խոշոր են, աննշան փշերով: Երկար վարսանդավոր ծաղիկները սովորաբար առաջանում են նախորդ տարվա շիվերի վրա և տալիս են պտուղներ: Իսկ ընթացիկ տարվա շիվերի վրա առաջանում են զանգականման ծաղիկներ և ծաղկելուց հետո առանց պտղաբերման թափվում են: Ծաղկումը սկսում է մայիսից և շարունակվում է 2 ամիս:</p>	<p>Պտուղները մինչև 240 գ քաշով կլորավուն-երկարացած է: Պտղի կեղևը բարակ է ,0.2սմ հաստությամբ, կիսաչոր, ամուր, փայլուն, խորդուբորդ: Թույլ արտահայտված կետերով: Տեղ-տեղ կան դարչնագույն խցանումներ: Միջնապատերը բարակաթաղանթ են: Հատիկները խոշոր են, մուգ, բարակ ու նուրբ թաղանթով, մսոտ, հյութալի, հյութը առատ է, ծածկող գույնը ինտենսիվ մուգ բալագույն: Հյութը առատ է, թթվաշաքարային, հաճելի համով, 13.1% ընդհանուր շաքարի, 1.94% թթուների, 0.08% դաբաղանյութերի պարունակությամբ: Պտուղների հյութից էլքը 53-56% է: Մերմերը միջին չափի են:</p>
<p><u>Գյուլըշա կարմիր կամ Գյուլըշա ադրբեջանակա</u> և Սորտը տարածված է Հայաստանի հյուսիս-արևելյան</p>	<p>Այս սորտը միջին ցրտադիմացկուն է: Պտուղների բերքահավաքը կատարում են հոկտեմբերի կեսին:</p>	<p>Մեկ թփից միջին բերքը՝ 35-40 կգ է: Պտուղների պահունակությունը 2-3 ամիս է: Սորտը պիտանի է ունիվերսալ օգտագործման՝ թարմ և վերամշակման (հյութեր գինի) համար:</p>	<p>Թուփը 3.5 մետր է աննշան քանակությամբ փշերով:</p>	<p>Պտուղները կշռում են 300-400 գ., տափակ-կլորավուն, թեթևակի ուռուցիկ հիմքով, թեթևակի ալիքավոր գագաթով: Կողավոր է, գագաթը լապտերաձև է, փակ, 5-7 ատամներով: Կեղևը մինչև 3 մմ հաստության է, ճկուն հարթ, փայլուն: Հիմնական գույնը սերուցքագույն է, ծածկող գույնը՝ ինտենսիվ մուգ կարմիր, բալագույն: Մակերեսային կետերը մուգբալագույն են, կեղևի ներսի կաղմում միջնապատերի</p>

շրջաններում:				խցիկների հաստացումները կարմիր են: Հատիկները երկար են, բարակ նուրբթաղանթով, բալագույն: Հյութը առատ, գինեգույն, թթվաշաքարային, պարունակում է 11.75% ընդհանուր շաքարներ և 2.18% թթուներ: Պտուղներում հյութը 41% է:
<u>Շախ-նուռ</u> Հանդիպում է Մեղրու, Նոյեմբերյանի և Հայաստանի այլ շրջաններում:	Ծառերը պտղաբերման են անցնում տնկման 3-րդ տարուց: Ցրտադիմացկունությունը - 14° C է:	Մեկ թփի միջին բերքը 38 կգ է: Պտուղները պիտանի են միայն թարմ վիճակում օգտագործելու համար:	Թուփը ուժեղ աճ ունի, հասնում է մինչև 4 մ բարձրության:	Պտուղները արտաքին տեսքով և համային հատկություններով նման են քաղցր սորտին, բայց տարբերվում են պտղի արտաքին կառուցվածքով և հատիկների մեծությամբ: Պտուղները մեծ մասամբ խոշոր են: Կեղևը բարակ է, փխրուն, վարդագույն, ամուր թաղանթով, քաղցր: Հյութի ելքը պտուղներից 53% է:
<u>Քաղցր վաղահաս</u> Տարածված է Մեղրու և Նոյեմբերյանի շրջաններում:	Ծառերը պտղաբերման են անցնում տնկման 3-րդ տարուց, արտադրական նշանակության բերքը տալիս են 5-6 տարուց:	Մեկ թփի միջին բերքը 28 կգ է: Պտուղներն օգտագործվում են թարմ վիճակում:	Թփի բարձրությունը մինչև 3 մ է թույլ ճյուղավորությամբ և տերևապատվածությամբ: Պտղաշիվը կարճ է և պտուղը նրան կպած է թեք ձևով:	Պտուղները խոշոր են՝ 250-420 գ քաշով, գրեթե գնդաձև: Հիմնական գույնը դեղնասերուցքագույն է, ծածկողը՝ կարմիր: Կեղևը ներսի կողմից դեղին է: Պտուղը վարդագույն է, բաց երանգավորումով և հաստ թաղանթով: Հյութը գորշ է, քաղցր, քիչ տոտիկ: Պտուղներից հյութի ելքը՝ 34% է:

Խոշոր՝ 300 գ.-ից բարձ
Միջին մեծության՝ 150-250գ.
Մանր՝ 80-100գ.



<i>Սորտի անվանումը</i>	<i>Հասունացման ժամկետը և ցրտադիմացկունությունը</i>	<i>Բերքատվությունը Պտուղների պահունակությունը և փախադրունակությունը</i>	<i>Աճման, պտղաբերման բնույթը</i>	<i>Պտղի մեծությունը, գույնը, համը</i>
<p>Զենջի-Մարու Շատ տարածված սորտ է:</p>	<p>Բավական ցրտադիմացկուն է: Ծաղկում է հունիսին, փոշոտիչների կարիք չի զգում, ինքնափոշոտվող է:</p>	<p>Պտուղները հասունանում են հոկտեմբերի երկրորդ կեսին և նոյեմբերի առաջին տասնօրյակին: Այս սորտը փոխադրունակ է, պտուղները պահելու ընթացքում հասունանում են 1,5-2 ամսում:</p>	<p>Ճապոնական խուրմայի արդյունաբերական սորտի մենտի համար հիմնական փոշոտիչներ են հանդիսանում: Ծառերը միջին մեծության են: Արական և իգական ծաղիկները առաջանում են մեծ քանակությամբ: Առատ ջրելիս ամեն տարի լավ պտղաբերում են: 7-14 տարեկան ծառերը տալիս են մինչև 100 կգ պտուղ:</p>	<p>Պտուղները միատեսակ չափերի են, մանր մինչև 55 գ քաշով և միջին չափի: Պտուղները կլորավուն են, հազվադեպ՝ երկարավուն-կլոր: Գազաթը ոչ մեծ, քառակուսի, փոս ընկած, բաժանված չորս մասի: Մեջտեղում գտնվում է սևացած վարսանդի մնացորդը փշիկի նման: Հասունացած պտուղների մաշկը մուգ նարնջակարմիր է, քիչ մոխրագույն մոմափառով: Պտղամիսը գորշ է, մուգ, թափանցված տեսանելի թելերով:</p>

<p>Ջիրո (Պրևոսխտոնի) Սորտը ըստ պտուղների որակի պատկանում է ճապոնական խուրմայի լավագույն համաշխարհային ստանդարտներին: Հայաստանում տարածված է Նոյեմբերյանի և Թումանյանի շրջաններում:</p>	<p>Բավական ցրտադիմացկուն է: Քաղելու համար պիտանի են նոյեմբերի սկզբին</p>	<p>10-14 տարեկան ծառերը տալիս են մինչև 51 կգ պտուղ: Պտուղները փոխադրունակ են, երկարատև են պահպանվում (2 ամսից ավել) պիտանի են թարմ և չորացրած վիճակում օգտագործելու համար, տալիս են բարձրորակ մթերք:</p>	<p>Ծառերը բավական խոշոր են: Մաղարթը գնդաձև է, առատ տերևակալված: Ծաղիկները միասեռ են, իգական: Ծաղկում է հունիսին, փոշոտիչի կարիք է զգում, տալիս է լավ բերք:</p>	<p>Հյութալի է, քաղցր, ոչ տոլիպ:</p> <p>Պտղի միջին քաշը 135 գ է: Պտուղները տափակ են, լայնական կտրվածքում քառակուսի: Լրիվ հասունանալիս մաշկը նարնջագույն է, իսկ գերհասունանալիս՝ բաց դարչնագույն, ամբողջ մակերեսի վրա մոխրագույն փառով պատված, միջին հաստության: Պտղամիսը կարմրանարնջագույն է, թափանցիկ, հյութալի, ժելեանման, քիչ թելավոր, քաղցր՝ կանաչ և հասուն վիճակում, առանց տոպուրյան, լավ համով պտղի բոլոր մասերով համաչափ հասունացող:</p>
<p>Մարու Սորտն աճում Նոյեմբերյանի և Իջևանի շրջաններում:</p>	<p>Ցրտադիմացկուն է: Պտուղները հավաքում են</p>	<p>7-14 տարեկան ծառերը տալիս են մինչև 55 կգ պտուղ: Փոխադրունակ են,</p>	<p>Ծառը միջին չափի է: Արական և իգական ծաղիկներով: Ծաղկում է</p>	<p>Պտուղները միջակ մեծության են մինչև 125գ. քաշով: Ձևը՝</p>

	<p>հոկտեմբերի վերջին նոյեմբերի սկզբին, բերքատու է:</p>	<p>պահունակ են, պիտանի են թարմ վիճակում օգտագործելու համար:</p>	<p>հունիսին, ինքնավոշոտվող է:</p>	<p>կլորավուն է («Մարու» նշանակում է կլոր: Վերևի մասում տափակացած և փոսիկով: Պտղամաշկը բարակ է, խիտ, կոպիտ, հեշտ է անջատվում պտղամսից, նարնջակարմիր, թույլ մոխրագույն փառով, փայլուն, պտղի վերևի մասում համակենտրոն գծով: Պտղամիսը կանաչ վիճակում ուտելու համար պիտանի է, լրիվ հասունանալիս մուգ նարնջագույն է կամ գրեթե դարչնագույն, հյութալի, նուրբ, քաղցր, լավհամով:</p>
<p>Հաշիա (Խաշիա) Սորտը չիր պատրաստելու համար արժեքավոր հատկանիշներ ունենալու շնորհիվ մտել է ԱՄՆ-ի և Ճապոնիայի արդյունաբերական սորտիմենտի ավի մեջ: Հայաստանում աճում է Նոյեմբերյանում, Իջևանում, Մեղրիում:</p>	<p>Ցրտադիմացկունությոնը ցածր է, խնամքի նկատմամբ պահանջկոտ է: Բերքահավաքը կատարում են հոկտեմբերի վերջին:</p>	<p>Չհասունացած պտուղները տոփպ են, իսկ հասունացածները տոփպ չեն, թափանցված են բարակ թելիկներով, որոնք օգտագործման ժամանակ չեն զգացվում: Ծառերը 10-14 տարեկանում տալիս են</p>	<p>Ծառը ուժեղած է, գնդաձև: Ծաղիկները իզական են, արական ծաղիկներ չունեն: Ծաղկում է հունիսին, պտղաբերում նարտահայված պարբերականությամբ է: Տալիս է արժեքավոր մթերք</p>	<p>Միջին չափի է՝ 230 գ պտղի քաշով: Պտուղների չափերն ըստ տարիների խիստ տատանվում են: Պտուղները երկարավուն-կոնաձև են: Գազաթը</p>

		<p>մինչև 51 կգ պտուղ: Այս սորտի փոխադրունակությունը ցածր է, պտուղները երկարատև չեն պահվում:</p>	<p>թարմ վիճակում օգտագործելու և չիր պատրաստելու համար:</p>	<p>աստիճանաբար սրանում է վարսանդի մնացորդով, իսկ հիմքը փոսիկով : Մաշկը մուգ նարնջագույն է, կարմիր երանգով, բարակ, դիմացկուն չէ, փայլուն, ողորկ, թեթև մոմափառով, շատ պտուղների վերևի մասում և կողքերին կան մուգ կետեր և նույն գույնի մանր գծեր: Պտուղները մեղրահամ հյութալի և քաղցր են, թույլ տոփպոթյամբ գերազանց որակի:</p>
<p>Հիակումե (Խիակումե) Այս սորտը լայն տարածված է Ճապոնական խուրմայի մշակության բոլոր շրջաններում և մտնում է ստանդարտ սորտերի մեջ:</p>	<p>Ցրտադիմացկուն է, ծաղկում է հունիսին, Պտուղները հավաքում են հոկտեմբերի վերջից, նոյեմբերի սկիզբը:</p>	<p>7-9 տարեկան ծառը տալիս են մինչև 88 կգ բերք: Փոխադրունակ են, պտուղները պահելու տևողությունը 2 ամիս է: Պտուղները թարմ և չիր պատրաստած վիճակում բարձրակ են:</p>	<p>Ծառերը ուժեղաճ են, լայն-կլորավուն, ճյուղերի խիտ դասավորությամբ: Ծաղիկները իզական են, արական ծաղիկներ չունի: Յուրաքանչյուր ծառի վրա ըստ ծյուղերի դրանց ձևը փոփոխական է, կախված պտուղներում սերմի քանակից և դասավորությունից, որոնք առաջացել են փոշոտումից:</p>	<p>Միջին չափի պտղի քաշը 195գ. է, խոշորինը՝ 225գ., իսկ փոքրինը՝ 150գ.: Պտուղները խնձորանման են, կլոր են, մասամբ տափակ: Պտղի վերևի մասը կլոր է, սև կետով, որը մնացել է վարսանդից: Լրիվ հասունանալիս նարնջակարմիր է,</p>

			<p>Կանաչ և հասուն պտուղների պտղամիսը սերմերով է, տտիպ չէ:</p>	<p>գերհասունացած պտուղները նարնջակարմիր, դարչնագույն երանգով, թույլ փայլուն, մոխրագույն փառով: Պտղի վերևի մասում ծածկված է խցանացած, կարճ, համակենտրոն ոչ շատ գծերով, որոշ պտուղների վրա գծեր չկան: Պտուղը հյութալի է, ժելեանման, հալվող, հաճելի համով: Այսպիսի պտուղներին անվանում են «Կորոլյոկ»:</p>
--	--	--	---	--

Խոշոր՝ 200 գ.-ից բարձ

Միջին մեծության՝ 100-200գ.

Մանր՝ 50-100գ



ՀՀ-ում աճող Ձիթենու որոշ սորտերի համառոտ բնութագիրը

Աղյուսակ 6դ

<i>Սորտի անվանումը</i>	<i>Հասունացման ժամկետը և ցրտադիմացկունությունը</i>	<i>Բերքատվությունը Պտուղների պահունակությունը և փախադրունակությունը</i>	<i>Աճման, պտղաբերման բնույթը</i>	<i>Պտղի մեծությունը, գույնը, համը</i>
<p><u>Ղրիմսկի 172 (Ղրիմսկայա)</u> Սորտը առանձնացվել է Ղրիմի ձիթենու հին տնկարկներից՝ Նիկիտսկի պետական բուսաբանական այգու մասնագետների կողմից</p>	<p>Այս սորտը միջին ցրտադիմացկուն է: Պտուղները հասունանաում և բերքահավաքի համար պիտանի են դառնում հոկտեմբերի վերջից, մինչև նոյեմբերի II տասնօրյակը:</p>	<p>Ղրիմի 172-ը պատկանում է յուղատու սորտերի խմբին: 10-13 տարեկան ծառերը տալիս են 10 կգ պտուղ: Պտուղները կարելի է օգտագործել կանաչ վիճակում և լրիվ հասունացած վիճակում աղ դրած:</p>	<p>Ծառը խոշոր է, ուժեղաճ: Ողկույզներում առաջանում են մեկական, հազվադեպ՝ երկուական նորմալ զարգացած պտուղ: Ծաղկում է հունիսի I կեսին:</p>	<p>Մեկ 6-3կգ-ում կա 197 պտուղ: Վերջիններս կշռում են 4,2գ-4,8գ: Պտուղների ձևը գրեթե սիմետրիկ է, կլորավուն-օվալաձև: Լրիվ չհասունացած մաշկը մուգ մանուշակագույն է, լրիվ հասունացած ժամանակ՝ սև մանուշակագույն երանգով, հարթ, փայլուն, առանց մոմափառի, բարակ: Պտղամիսը միջին խտության է, հյութալի, նուրբ բաց սերուցքագույն:</p>
<p><u>Նիկիտսկի I (Նիկիտսկայա)</u> Սորտը առանձնացվել է Ղրիմում տեղական ձիթենու տնկարկներից պետական բուսաբանական այգու մասնագետների կողմից:</p>	<p>Բավական ցրտադիմացկուն է: Պտուղների հասունացման սկիզբը նշվում է հոկտեմբերի 3-րդ տասնօրյակը և շարունակվում է նոյեմբերի առաջին տասնօրյակի ընթացքում:</p>	<p>Նիկիտսկի I-ը պատկանում է յուղատու սորտերի խմբին: Աշնան ջերմաստիճանային պայմաններից կախված, հասունանում է պտուղների 60-ից մինչև 90%-ը: Բերքը բարձր է, 10-13 տարեկան ծառերի վրա կազմակերպվում է 20-35 կգ պտուղ, բայց ոչ ամեն տարի:</p>	<p>Ծառերը զգալի մեծության են, ուժեղաճ: Ծաղկաբույլում կան մոտավորապես 17 ծաղիկ, իսկ ողկույզներում առաջանում են մեկական, հազվադեպ երկուական և երբեմն էլ երեքական պտուղ: Հասունանալիս պտուղները չեն թափվում: Ծաղկում է հունիսի I-ին և II-րդ տասնօրյակում: Հաշվի առնելով պտուղների</p>	<p>Մեկ կիլոգրամում կա 380 պտուղ: Պտուղները կշռում են մինչև 3,5 գ: Ձևը աննշան սիմետրիկ է, կլորավուն-օվալաձև: Մաշկը սև է, մանուշակագույն երանգով, փայլուն, ամուր, բավական հաստ: Պտղամիսը նույնպես ամուր է, պտղի ներսի մասում բաց վարդագույն:</p>

			մեծությունը և հասունացման աստիճանը, այն օգտագործում են աղ դրած վիճակում, պատրաստում են կանաչ մարինադ և ստանում են յուղ:	
--	--	--	--	--

Խոշոր՝ 6 գ.-ից բարձ

Միջին մեծության՝ 3-5գ.

Մանր՝ 2-3գ.

Գրականություն ցանկ

1. Հայաստանի ինտենսիվ այգիները: Գիտական հոդվածների ժողովածու / ՀՀ գյուղ. նախարարություն.- Եր.: ԽԳՊԳՀԻ, 1990, 79 - էջ:
2. Մարգարյան Ա. Ե., Շահինյան Հ. Ն. - Պտղաբուծություն "Լույս" հրատարակչություն, Երևան, 1976 թ, 559 էջ:
3. Վերմիշյան Ա., Դիլանյան Հ., Սանադյան Մ. և ուրիշներ Հայաստանի պտուղները, 1,2,3,4,5 հատորներ, Երևան, 1958 -1981
4. Վերմիշյան Ա. և ուրիշներ - Պտղաբուծության տեղեկագիրք - Երևան, 1959:
5. «Պատվո նշան» շքանշանակիր խաղողագործության, գինեգործության և պտղաբուծության Հայկական գիտահետազոտաան ինստիտուտ, 'Հայկական ՄՍՀ սալորենու և շլորենու շրջանացված ու տարածված սորտերի համառոտագրություն', Երևան 1983, 21 էջ:
6. Սանթրոսյան Գ.Ս. Հովհաննիսյան Ա.Ռ., Գաբրիելյան Ս.Գ. -Պտղաբուծություն Ուսումնական ձեռնարկ լաբորատոր պարապմունքներ անցկացնելու համար, Երևան 2014

Լրացուցիչ գրականություն

18. БородинаН.А. идр. Деревья и кустарники СССР. –М., 1966. – 637 с.
19. БотевМ., БурлойН. Культура абрикоса.-М., 1980, 152 с.

** ՈՒսանողը կարող է ձեռք բերել ուսումնառության ռեսուրսներ ՀԱԱՀ-ի գրադարանից, համալսարանի պաշտոնական կայքի (www.anau.am) "Գրադարան" բաժնից, դասախոսի հետ կապ պահպանելով E-mail-ի միջոցով:*